

Գ. Վ. ՊԼԵԻՍՆՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՆՀԱՏԻ  
ՈՒՆԵՑԱԾ ԴԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՃԸ


Գ Ե Զ Կ Բ Ա Ց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Երևան • 1989

ԳՐՈՂԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

Դ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՆՀԱՏԻ  
ՈՒՆԵՑԱԾ ԴԵՐԻ ՀԱՐՑԻ ՃՈՒՐՁԸ



Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Գ. Վ. Պլեխանովի «Պատմության մեջ անհատի ունեցած գերի հարցի շուրջը» աշխատությունն առաջին անգամ տպագրվել է 1898 թ. «Научное обозрение»-յի մեջ Ա. Կիրսանով կեղծանունով։ Հետագայում նա մտավ «За двадцать лет» ժողովածուի մեջ։ Պլեխանովի յերկերի ժողովածուի մեջ բերվում է 1925 թ. հրատարակության VIII հատորում։

Այս աշխատությունը ամենաշքի ընկնող տեղերից մեկն է գրավում Պլեխանովի ուրիշ այնպիսի աշխատությունների շարքում, վորոնք նվիրված են մարքսիզմի հիմնավորմանն ու պաշտպանությանը և հասարակական զարգացման մարքսիստական թեորիայի պրոպագանդային։


Մարքսիզմի թշնամիները վազուց ջանում եյին մարքսիզմը մեղադրել նրանում, վոր իրեն թե նա ժխտում է անհատի գերն ու նշանակությունը հասարակական զարգացման մեջ և պատմական շարժումն իսկ գարձնում է ինչ-վոր ճակատագրական, անանուն, դիմագուրկ մի բան։ Նման մի բամբասանք առանձին ջանասիրությամբ տարածում եյին 90-ական թվականներին ուռական նարոդնիկները՝ մարքսիզմի ամենակատաղի թշնամիները։

Պլեխանովի «Պատմության մեջ անհատի ունեցած գերի հարցի շուրջը» աշխատությունն ահագին գեր է խաղացել մարքսիզմի հասցեյին արած այդ ամենաշար բամբասանքը մերկացնելու և պատմության մեջ անհատի ունեցած գերի նկատմամբ մարքսիզմի իսկական հայցքը պարզելու գործում։

Մարքսիստական գրականության մեջ Պլեխանովի այս աշխատությունը հանդիսանում է լավագույններից մեկը։ Տաղանդավոր, պատկերավոր գրված, սրամտությամբ փայլող այս աշխատությունը ներկայումս ել համակում է ընթերցողին և ող-

Г. В. ПЛЕХАНОВ  
К ВОПРОСУ О РОЛИ  
ЛИЧНОСТИ В ИСТОРИИ

Армгиз—Издательство полит. литературы



11-286289

նում և ճշտորեն պարզելու հասարակական գարգացման մեջ անհատի ունեցած դերի հարցը:

Պատմության մեջ անհատի ունեցած դերի վերաբերյալ մարքսիզմի հայացքները փայլուն կերպով շարադրելու հետ մեկտեղ այս աշխատությունը խորտակիչ հարգած հասցրեց նարոդակական թեորիայի հիմունքներից մեկին, «հերոսների» և «ամբոխի» թեորիային, վորի համաձայն՝ մարդկության պատմությունը զարգանում ե վոչ թե իբրև վորով, որինաշափ պրոցես, այլ ընթանում է պատմական ուղինեցով՝ «քննադատորեն մտածող անհատների» դեղատոմներով ու յերևակայությամբ և կերտվում ե իբրև թե միայն «հերոսների» ձեռքով, իսկ ժողովրդական մասսան մնում ե «իներտ ուժ», «ամբոխ» և նա («հերոսը») «չի կարող նրա վրա նայել վերից վար, չի կարող չգիտակցել վորքանն ամբողջ նրա, հերոսի մեջ և, այսինչ ամբոխն ամեն մի ստեղծագործ տարրի խորթ մի մասսա յե, զերոների ահագին քանակության նման մի ինչ-վոր բան, վորոնք բարերար նշանակություն ստանում են միայն այն գետքում, յերբ ներողամտաբար նրանց գլուխ ե կանգնում մի բարի, «քննադատորեն մտածող» միավոր» (Պեխանով, Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը, հ. VII, եջ 156); Պեխանովը այդ հայացքներից քար քարի վրա չի թողնում, միաժամանակ ջախջախելով նաև այն քաղաքական հետեւթյունները, վոր անում եյին նարոդնիկները (իսկ հետագայում նաև հայրները) այդ «թեորիայից», հրաժարումը մասսայական հեղափոխական պայքարից, հեղափոխական մասսայական կուռակցության կազմակերպումը բացառող անհատական տեսորի քարոզը:

Դրա հետ մեկտեղ Պեխանովը այս աշխատության մեջ ջախջախում ե նաև կապիտալիզմի ուղղակի ջատագովների հետևությունները, վորոնք ջանում եյին հասարակական զարգացման որինաշափ ընույթը վկայակոչելով «թեորիապես» հիմնավորել կապիտալիզմի գեմ պայքարելուց բանվորների հրաժարվելու անհրաժեշտությունը և, այդպիսով, պատմական շարժումից դուրս դրելու նրա հիմնական շարժիչ ուժը՝ հեղափոխական զասակարգը և հեղափոխական զասակարգի առաջնորդներին:

Այն անհեթեթ հետևությունը, թե քանի վոր հասարակա-

կան զարգացումը հանդիսանում է որինաշափ պրոցես, ապա, հետևաբար, «անհատը վոչինչ չի կարող», —այդ հետևությունը, վոր մարքսիզմը գիտակցորեն խեղաթյուրող նարոդները ջանում եյին նրան վերագրել կապիտալիզմի բացահայտ պաշտպանները, ջատագովները նույնպես ջանում եյին Մարքսի ուսմունքի իսկական վոգու տեղ անցկացնել: Պեխանովը ջախջախում ե նաև այդ փորձը: Մարդկության պատմությունն որինաշափ պրոցեսն, բայց նա ընթանում ե վոչ թե մարդկանց կողքով, այլ կատարվում է մարդկանց ձեռքով, վորոնք իրենք են դնում շարժման խնդիրները և զրանք լուծում են զարաշրջանի պատմական պայմաններին համապատասխան, ուստի և մարդկանց գործունեցությունը չի կարող ահագին նշանակություն չունենալ պատմության մեջ: Պեխանովը հիմնալի ցույց է տալիս և հիմնավորում նաև այն բացառիկ գերը, վոր պատմության մեջ կարող ե խաղալ աշքի ընկնող անհատը: Պեխանովն է, վոր մեծ մարդը մեծ ե նրանով, վոր «նա ունի այնպիսի առանձնահատկություններ, վորոնք նրան առավել ընդունակ են դարձնում ծառայելու իր ժամանակի հասարակական այն մեծ կարիքներին, վորոնք առաջացել են ընդհանուր ու հատուկ պատճառների ազդեցության տակ: Կարելի լին հերոսների մասին իր դրած հայտնի աշխատության մեջ մեծ մարդկանց սկսողներ (Beginners) և անվանում: Այդ շատ հաջող կոչում է: Մեծ մարդն հենց սկսող և հանդիսանում, վորովհետեւ նա մյուսներից ավելի ներուն և տեսնում և ուրիշներից ավելի ուժեղ և կամենում» (Պեխանով, Պատմության մեջ անհատի ունեցած դերի հարցի շուրջը, հ. VIII, եջ 304—305):

Աչքի ընկնող անհատի ուժը գասակարգի հետ, մասսաների հետ, ժողովրդի հետ նրա ունեցած կապի մեջ և, նրա ուժը մասսաները կազմակերպելու ունակության մեջ և, պատմական շարժման ընթացքը նախատեսելու ունակության մեջ և: Հակառակ դեպքում անհատի գերն ի չիք կրառնա: Ընդգծելով մասսաների մեծ ուժը, վորպես պատմության իսկական կերպովների, ընկեր Ստալինն ասում է. «Միայն ժողովրդն է անմահ: Մնացած ամեն ինչ անցողիկ է: Ուստի և պետք է կարողանալ թանգիստհատել ժողովրդի վատահությունը»:

Պեխանովի «Պատմության մեջ անհատի ունեցած դերի

հարցի շուրջը՝ աշխատությունը, չնայած վոր ինքը Պլեխանովը հետագայում, կտրվելով մասսաներից, ոկտեգ քաղաքականապես կաղալ, մինչև այժմ ել շատ մեծ նշանակություն և պահում: Նա կարող ե մեծ ոգնություն ցույց տալ մեր յերիտառարդությանը՝ ձշտորեն բացատրելու պատմության մեջ անհատի ունեցած գերի մասին մարքսիստական ուսմունքը և ոգնել պատմության մեջ անհատի ունեցած դերի նկատմամբ նարոդնիկական-եսերական հայացքների մնացուկների գեմ մղվող պայքարում:

Լենինը գրել է, վոր «հսկայական են նրա (Պլեխանովի:— Խմբ.) անձնական ծառայություններն անցյալում: 20 տարվա ընթացքում, 1883—1903, նա տվեց բազմաթիվ հիմնալի յերկեր, մասնավանդ ոպորտունիստների, մախիստների, նարոդնիկների գեմ» (Լենին, հ. XVII, եջ 415—416): Լենինը յերիտառարդ կումունիստներին մատնանշում եր, վոր անհրաժեշտ և ուսումնասիրել Պլեխանովի փիլիսոփայական աշխատությունները, պնդում եր, վոր դրանք պետք ե վերահրատարակվեն և մտցվեն «Կոմունիզմի պարտադիր դասակրքերի սերիայի մեջ» (Լենին, հ. XXVI, եջ 135):

Յոթանասնական թվականների յերկրորդ կիսին հանգուցյալ կարլիցը մի հոդված ե գրել՝ «Խելքը և զգացմունքը, վորպես առաջադիմության գործոններ», վորի մեջ նա, Սպենսերին վկայակոչելով, ապացուցում եր, վոր մարդկության առաջընթաց շարժման մեջ գլխավոր գերը պատկանում է զգացմունքին, իսկ խելքը յերկրորդական և այն ել կատարելապես յենթակա դեր և խաղում: Կարլիցին առարկել եր մի «պատվարժան սոցիոլոգ», հեղնական զարմանք արտահայտելով այն թեորիայի առթիվ, վորը խելքը «կրունկին» եր տեղավորում: «Պատվարժան սոցիոլոգը», հասկանալի յե, իրավացի յեր, խելքը պաշտպանելով: Սակայն նա ավելի իրավացի կլիներ, յեթե առանց կարլիցի բարձրացրած հարցի ելությունը շոշափելու, ցույց տար, թե ինչ աստիճանի անկարելի ու անթույլատրելի յե այդ հարցագրումն ինքնին: Իրոք, «գործոնների» թեորիան ինքնըստինքյան արդեն անհիմն ե, վորովհետեւ նա քմահաճորեն առանձնացնում և հասարակական կյանքի տարրեր կողմերը և անձնավորում և նրանց՝ դարձնելով հատուկ տեսակի ուժեր, վորոնք տարրեր, կողմերից և անհավատար հաջողությամբ մղում են հասարակական մարդուն առաջադիմության ուղիով: Բայց ել ավելի անհիմն ե այդ թեորիան այն կերպարանքով, վոր ստացել ե նա կարլիցի մոտ, վորը հատուկ սոցիոլոգիական անձնավորություններ (հիպոտասներ) և դարձրել արդեն վոչ թե հասարակական մարդու գործունելության այս կամ այն կողմը, այլ անհատական գիտակցության տարրեր բնագավառները: Այդ խօսապես վոր աբստրակցիայի չերկուեսյան սյուներ են, ավելի հետու գնալու այլև տեղ չկա, վորովհետեւ հետո սկսվում ե արգեն միանգամայն ակընհայտ անհեթեթության կոմիկական թագավորությունը: «Պատվարժան սոցիոլոգին» հարկավոր եր հենց սրա վրա դարձնել

Կաբլիցի և նրա ընթերցողների ուշագրությունը: Յերեան հանելով այն, թե արտօրակցիայի վորպիսի խորքեր և գցել Կաբլիցին՝ պատմության մեջ գերիշխող «գործոնը» գտնելու ձգտումը, «պատվարժան սոցիոլոգը», գույն, պատահմամբ վորեե բան աներնակ գործոնների թեսրիայի քննադատության համար: Այդ մեղ բոլորիս ել խիստ ոգտակար կլիներ այն ժամանակ: Բայց նա իր կոչման բարձրության վրա չփանչեց: Նա ինքը ևս նույն թեսրիայի տեսակետին եր կանգնած, տարբերվելով Կաբլիցից միայն իր հակումով զեպի եկեղեցիզմը, վորի շնորհիվ բոլոր «գործոնները» նրան հավասարապես կարեռ երին թվում: Նրա խելքի եկեղեցիկական հատկություններն առանձնապես պայծառ արտահայտվեցին հետագայում՝ գիտելելուկական մատերիալիզմի դիմ նրա արած հարձակումների մեջ, վորի մեջ նա տեսել եր մի ուսմունք, վորը մյուս բոլոր «գործոնները» գոհում և անտեսականին և անհատի գերը պատմության մեջ զերոյի յե հավասարեցնում: «Պատվարժան սոցիոլոգի» մաքով անդամ չեր անցնում, թե գիտելելուկական մատերիալիզմը խորթ և «գործոնների» տեսակետին, և վոր տրամաբանորեն մտածելու կատարելապես անընդունակ լինելու զեպօւմ միայն կարելի յե նրա մեջ այսպիս կոչված բիլիետիզմի արդարացումը տեսնել: Հարկավոր և նկատել վոր «պատվարժան սոցիոլոգի» այդ վրիպումի մեջ, իրոք, որին զինալ վոչ մի բան չկա, այդ վրիպումն ունեցել են, ունեն և, հավանորեն, դեռ յերկար պիտի ունենան շատ և շատ ուրիշները...

Մատերիալիստներին սկսեցին քվիետիզմին հակվելու մեջ մեղագել արդեն այն ժամանակ, յերբ նրանք գեռեա բնության և պատմության մասին դիտեկտիկական հայացք չեյին մշակել: «Ժամանակների խորքը» չգնալով, մենք կիշեցնենք Անգլիայի հայտնի գիտնական Պրիստլեյի վեճը Պրայսի հետ: Պրիստլեյի ուսմունքը քննելով, Պրայսն ապացուցում եր, ի միջի այլոց, վոր մատերիալիզմն անհամաձայնելի յե ազատության հասկացողության հետ և վերացնում և անհատի վորես ինքնազործունեյությունը: Դրան ի պատասխան Պրիստլեյը վկայակոչեց առորյա փորձը: «Յես չեմ խոսում իմ մասին, թե ապես ինձ ևս, ինարկե, չե կարելի անվանել ամենանշարժը բոլոր կենդանիների մեջ (am not the most torpid and lifeless of all animals), բայց հարց-

նում եմ ձեզ, վերտեղ գուք կզանեք մտքի ավելի մեծ յեռանգ, ավելի ակտիվություն, ավելի ուժ ու համառություն ամենակարևոր նպատակների հետապնդման մեջ, քան այդ կարելի յե գտնել անհրաժեշտության ուսմունքի հետևորդների ըրջանումը: Պրիստլեյը նկատի ունենք այն ժամանակ այսպես կոչված christian necessarians կրոնական գեմոկրատիկ աղանդը\*): Զգիտենք, արդյոք ճիշտ այնպես զործունյա յեր այդ աղանդը, ինչպես այդ կարծում եր նրան պատկանող Պրիստլեյը: Բայց այդ կարեռ ել չե: Վոչ մի կասկածի յենթակա չե այն հանգամանքը, վոր մարդկության կամքի մասին մատերիալիստական հայացքն սքանչելիորեն հաշտվում և ամենայեռանգուն գործունեյության հետ գործնականում: Լանսոնը նկատում է, վոր «այն բոլոր ուսմունքները, վորոնք դիմել են մարդկային կամքին ամենամեծ պահանջներով, սկզբունքով հաստատել են նրա անզորությունը. նրանք բացասել են ազատությունը և աշխարհը յենթարկել ֆատալիզմին \*\*): Լանսոնն իրավացի չե, կարծելով, թե կամքի այսպես կոչված ազատության ամեն մի բացասում ֆատալիզմի յե հացնում, բայց այդ նրան չի խանգարել նկատելու պատմական վերին աստիճանի հետաքրքրական մի փաստ. իրոք, պատմությունը ցույց է տալիս, վոր նույնիսկ ֆատալիզմը վոչ միայն միշտ չի խանգարում գործնականում յեռանգուն գործելու, այլ ընդհակառակը, վորոց դարաշրջաններում նոգերանուրեն տնիւրածես հիմքն ե յեղել այդպիսի գուղղողության: Վորպես ապացույց բերենք պուրիստաններին, վորոնք իրենց յեռանգով գերազանցել երին XVII դարի Անգլիայի նացած բոլոր կուսակցությունները: Բերենք նաև Մահմեդի հետևորդներին, վորոնք կարծ ժամանակամիջոցում իրենց իշխանությունը յենթարկեցին մի ահազին հողաշերտ Հնդկաստանից մինչև ԽՍԱ սխալվում են նրանք, վորոնց կարծիքով՝ բավական և համոզվենք, վոր գեպքերի տվյալ շարքն անխուսափելի յե գալիք, վորպեսպի

\* ) XVII դարի ֆրանսացուն շատ կզարմացներ մատերիալիզմի այդպիսի գուղղորդումը կրոնական գովմատիկայի հետ Անգլիայում այդպիսի գուղղորդումը վոչ վոքի ասքորինակ չեր թվում: Պրիստլեյն ինքը շատ կրոնակարմարդ եր. ինչքան քաղաք, այնքան բարք:

\*\*) Տես նրա «Փրանսական գրականության» պատմության ոուսերին թարգմանությունը, հատոր 1, հջ 51:

մեր մեջ նրան աջակցելու կամ հակազդելու հոգեբանական ամեն  
մի հնարավորություն չքանա\*:)

Այստեղ ամեն ինչ կախված է նրանից, թե իմ սեփական  
գործունեյությունը կազմմամ ե, արդյոք, անհրաժեշտ մի ողակն  
անհրաժեշտ գեղեցերի շղթայում: Յեթե այս, ապա ավելի պակաս  
տատանումներ եմ ունենում յևս և ավելի վճռականորեն հմ գոր-  
ծում: Յեվ դրանում զարմանալի բան չկա, յերբ մենք առում  
ենք, թե տվյալ անհատն իր գործունեյությունը համարում ե  
անհրաժեշտ մի ողակը անհրաժեշտ գեղեցերի շղթայում, այդ նշա-  
նակում ե, ի միջի այլոց, վոր նրա համար կամքի ազատության  
բացակայությունը համարոր ե անզործության կատարյալ անըն-  
դունակության, և վոր կամքի ազատության այդ բացակայու-  
թյունը նրա գիտակցության մեջ անդրադառնում ե վորպես  
անհարինություն՝ այլ կերպ վարդելու, քան նա վարդում ե: Այդ  
հենց այն հոգեբանական տրամադրությունն ե, վոր կարելի յե  
արտահայտել Լութերի հոչակավոր խոսքերով՝ «Hier stehe ich,  
ich kann nicht anders», և վորի շնորհիվ մարդիկ յերեան են  
հանում ամենաանսանձ յեռանդ, կատարում են ամենաապշեցու-  
ցիչ սիրազործություններ: Այդ արամադրությունը հայտնի չեր  
չամլետին. դրա համար ել նա ընդունակ եր միայն նվալու և  
խորհում եր իր զգացումների մասին: Դրա համար ել չամլետը  
յերբեք չեր հաշտվի փիլիսոփայության հետ, վորի իմաստով  
ազատությունը լոկ անհրաժեշտությունն ե գիտակցություն դար-  
ձած: Ֆիլտեն իրավացի յե տուել. «Ինչ մարդն ե, այն ել թր  
փիլիսոփայությունն ե»:

\*) Հայտնի յե, վոր կալվինի ուսմունքի համաձայն՝ մարդկանց բոլոր  
արարքներն ասուած ե կանխորոշել: Praedestinationem vocamus aeternum  
Dei decretum, quo apud se constitutum habuit, quid de unoquoque homine  
fieri valet (Institutio, lib. III, cap.5): Այդ նույն ուսմունքի համաձայն՝ ասուած  
իր սպասագրներից մի քանիսին ընտրում ե անիրավացիորեն ճնշված ժողո-  
վուրգներին ազատագրելու: Այդպիսին եր Սովոհոր՝ Խօրայելի ժողովրդին  
ազատագրողը: Ըստ ամենայնի նկատելի յե, վոր կրոմքիլը ևս իրեն համարում  
եր ասուծու այդպիսի զործիք: Նա շարունակ ե, համանորեն, միանգամայն ան-  
կեղծ համոզմունքով եր իր գործողություններն ասուծու կոմքի արգասիք ան-  
գանում: Այդ բոլոր գործողությունները նրա հոմար կաթխապես գունավորված  
եյին անհրաժեշտության յերանգով: Այդ վոչ միայն չեր խանգարում նրան մի  
հաղթանակից մյուսին ձղտելու, այլի նրա այդ ձղտանն անզաղելի ուժ եր  
հաղորդում:

Մեզանում վոմանք լուրջ ընդունեցին Շտամլերի նկատողու-  
թյունը արևմտայելվրոպական սոցիալ-քաղաքական ուսմունք-  
ներից մեկին իբրև թե հատուկ իբրև թե մի անլուծելի հակա-  
ռության մասին: Մենք նկատի ունենք լուսնի խավարման  
հայտնի որինակը: Իրականում այդ գերազանցորեն անհեթեթ մի  
որինակ ե: Մարդկային գործունեյությունը վոչ մի կերպ չե  
մտնում և չի ել կարող մտնել այն պայմանների շարքի մեջ,  
վորոնց զուգորդումն անհրաժեշտ ե լուսնի խավարման համար,  
ուստի և հենց այս միակ պատճառով գժանոցում միայն կարող  
ե առաջանալ լուսնի խավարմանն աջակցելու կուսակցություն:  
Բայց յեթե մարդկային գործունեյությունը մտներ ել հիշված  
պայմանների շարքը, ապա լուսնի խավարման կուսակցության  
մեջ վոչ վոք չեր մտնի այն մարդկանցից, վորոնք, այն տեսնե-  
լու խիստ ցանկություն ունենալով հանդերձ, համոզված լինե-  
ցին, վոր նա անպայման տեղի կունենա նաև առանց իրենց  
տցակցության: Այս գեպքում նրանց «Քվիետիզմը» սոսկ ավելացր,

այսինքն ապարդյուն գործողությունից ձեռնապահ մնալ կնշանակեր  
և վոչ մի ընդհանուր բան չեր ունենա խկական քվիետիզմի  
հետ: Վորպեսզի վերը մատնանշած կուսակցության մեր քննած  
գեպքում լուսնի խավարման որինակը դադարեր անիմաստ լի-  
նելուց, հարկավոր կլիներ այն բոլորովին փոխել: Հարկավոր  
կլիներ յերեակայել թե լուսինը զիտակցությամբ և ոժոված, և  
վոր նրան թվում ե, թե իր այն զրությունը յերկնային տարա-  
ծության մեջ, վորի շնորհիվ նրա խավարումներն են առաջա-  
նում, իր կամքի ինքնորոշման արգասիքն ե և իրեն վոչ միայն  
հսկայական բավականություն ե պատճառում, այլև անպայման  
հարկավոր ե իր բարոյական անդրադրության համար, վորի հե-  
տեանքով ել նա շարունակ մոլի կերպով ձգտում ե այդ գիրքը  
գրավելու:\*) Այս ամենը յերեակայելուց հետո հարկավոր կլիներ  
հարցնել ինքն իրեն՝ ինչ կզգար արդյոք լուսինը, յեթե, վեր-  
ջապես, նա հայտաբերեր, վոր իրականում վոչ թե նրա կամքն

\*) «C'est comme si l'aiguille aimante'e prenait plaisir de se tourner  
vers le nord car elle croirait tourner inde'pendamment de quelque autre cause,  
ne s'apercevant pas des mouvements insensibles de la matière magne'tique». Leibnitz. Theodice'e. Lausanne, MDCCLX. p. 598.

ու «իդեալներն» են վորոշում նրա շարժումը յերկնային տարածության մեջ, այլ ընդհակառակը, նրա շարժումն և վորոշում թե նրա կամքը և թե նրա «իդեալները»: Բայ Շտամլերի գուրս և ալիս, վոր նման հայտնագործումն անպայման լուսնին շարժման անընդունակ կդարձներ, յեթե նա չարիքից չկարողանար ազատվել տրամարանական վորեն հակառության միջոցով: Բայց նման յենթադրությունը վորեւ հիմք չունի բնավի: Այդ հայունագործումը կարող եր հանդիսանալ լուսնի վատ արամագրության, ինքն իր հետ նրա բարոյական աններդաշնակության, նրա «իդեալների» և մեխանիկական իրականության հակառածության ձևական հիմքերից մեկը: Բայց քանի վոր մենք յենթադրությունը վերջիվերջո պայմանավորված են նրա շարժումով, ուստի շարժման մեջ ել պետք եր փնտուել նրա հոգեկան աններդաշնակության պատճառները: Խնդրին ուշադիր վերաբերվելու, գուցե, բանից գուրս գա, վոր յերբ լուսինը յերկրից գտնվում եր հեռավորության գագաթնակետին, ցավում ե, վոր իր կամքն անպատ ե, իսկ յերկրամերձ կետին՝ այդ նույն հանգամանքը նրա համար բարոյական յերանության և բարոյական առույգության նոր ձևական աղբյուր ե հանդիսանում: Գուցե և հակառակն ստացվեր, գուցե բանից գուրս գար, վոր վոչ թե յերկրամերձ կետին, այլ գագաթնակետին ենա ազատությունն ու անհրաժեշտությունը հաշտեցնելու միջոց գտնում: Բայց, ինչպես ել վար լինի, կառկածից վեր ե, վոր նման հաշտեցումը կատարելապես հնարավոր ե. վոր անհրաժեշտության գիտակցումը հիմնականում հաշտվում ե գործնականում ամենայենունդագին գործողության հետ: Գոնե այլպես ե յեղել պատմության մեջ մինչեւ այժմ: Կամքի ազատությունը բացասող մարդիկ հաճախ գերազանցել են իրենց բոլոր ժամանակակիցներին սեփական կամքի ուժով և ամենամեծ պահանջներն են առաջարկել նրան: Այդպիսի որինակները բազմաթիվ են: Նրանք հանրածանոթ են: Մոռանալ նրանց մասին, ինչպես, ըստ յերեսութին, Շտամլերն ե մոռանում, կարելի յի միայն այն դեպքում, յերբ դիտավորյալ կերպով չեմ ցանկանում տեսնել պատմական իրականությունն այնպիս, ինչպես վոր նա կա: Նման չկամեցումը շատ ուժեղ է, որինակը, մեր սուբյեկտիվիտերի և գերմանական մի-

քանի ֆիլիստերների մեջ: Բայց ֆիլիստերներն ու սուբյեկտիվիտերը մարդիկ չեն, այլ հասարակ ուրվականներ, ինչպես բելինսկին կամեր:

Ստկայն, մոտիկից քննենք այն դեպքը, յերբ մարդու սեփական—անցյալ, ներկա, կամ ապագա—գործողություններն իրեն ամբողջապես անհրաժեշտության գույքով ներկված են հանգիստանում: Մենք դիտենք արդեն, վոր այդ դեպքում մարդը,—իրեն աստծու առաջյալ համարելով՝ ինչպես Մահմեդը, կամ անողոք ճակատագրի ընտրյալ՝ ինչպես նապոլեոնը, կամ պատմական շարժման անհաղթահարելի ուժի արտահայտչը՝ ինչպես ՀԻ գարի միքանի հասարակական գործիչները,—յերևան և հանում կամքի գրեթե տարերային ուժ, խորտակելով, վորպես թղթեանակներ, այն բոլոր խոչընդոտները, վոր նրա ճամբին հարուցում են այլ և այլ գավառների Համբետներն ու Համբետիկները\*): Բայց այդ դեպքը մեզ այժմ հետաքրքրում ե ուրիշ կողմից, և ահա թե վոր կողմից: Յերբ իմ կամքի անազատության գիտակցությունը ներկայանում ե ինձ սոսկ վորպես սուրբյեկտիվը ու սրբիկալ կատարյալ անհնարինությունը այս վորպես այժմ կամքի անհնարինություն՝ այլ կերպ վարվելու, քան յես վարվում եմ, և յերբ իմ տվյալ գործողությունները միենույն ժամանակ ինձ համար հանդիսանում են նաև ամենացանկալին բոլոր հնարավոր գործողություններից, այն ժամանակ իմ գիտակցության մեջ անհրաժեշտությունը նույնանում և ազատության հետ, իսկ ազատությունը՝ անհրաժեշտության հետ, և այդ ժամանակ յես անազատ եմ միայն այն իմաստով, վոր չեմ կարող խօսել ազատության ու անհրաժեշտության այդ սույնությունը, չեմ կարող նակարել մեկը մյուսին, չեմ կարող

\*). Յերենք մի որինակ ես, վորն ակնառու կերպով ցույց ե ալիս, թե վորքան ուժեղ են զում այդ կատակրիպտի մարդիկ: Յերբարի ներցոգումնի ներկներ (Լյուզովիկ XII-ի դոմը) իր սուսուցիչ կալվինին ուղղած մի նամակում ասում ե, ովք, յես չեմ մոռացել այն, ինչ գրել եք ուրք ինձ, թե Դամիքը մահացու ատելություն եր ատածում դեպի ատածու թշնամիները. յես ինքու ել յերեք այլ կերպ չեմ վարվի, վորովհետեւ յեթե իմանամ, թե իմ հայրը՝ արքան, և իմ մայրը՝ թագուհին, և իմ հանգուցյալ պարոն ամուսինը (fou monsieur ton mari) և իմ բոլոր յերեխաները մերժված են ատածուց, յես կատեմ նրանց մահացու ատելությամբ և կցանկանամ, վոր նքանք զգովար գնանս, և այն: Վորպիսի սոսկալի, մեմն ինչ խորտակող յեսանդ ընդունակ եյին հայտաբերելու այն մարդիկ, վորոնք այսպիսի զգացմառները եյին ատածում: Իսկ չեմ վոր այդ մարդիկ բացասաւում եյին կամքի աղատաւթյունը

իմբ ինձ աննրածեսությամբ ննևված զգալ: Բայց ազատության այսպիսի բացակայությունը միաժամանակ նրա լիովատար դրսարաւմն ե:

Զիմմելն ասում ե, թե ազատությունը միշտ վորևե բանից ազատ լինելն ե, և վոր այնտեղ, վորտեղ ազատությունը չի ըմբռնվում վորպես կաշկանդվածության հակադրություն, նա իմաստ չունի: Այդ, ինարկե, այդպես ե: Բայց այս այրութենական փոքրիկ ճշմարտության հիման վրա չի կարելի հերքել փելիսոփայական մտքի յերբեւ արած հանճարեղ հայտնագործություններից մեկը կազմող այն դրույթը, թե՝ ազատությունը գիտակցված անհրաժեշտությունն ե: Զիմմելի սահմանումը չափազանց նեղ ե. նա վերաբերում ե սոսկ արտաքին ճնշումից ազատ լինելուն: Քանի խոսքը նման ճնշումներին ե վերաբերում, նույնացնել ազատությունն անհրաժեշտության հետ՝ ծայրահեղորեն ծիծաղաշարժ կլիներ, դողն ազատ չե ձեր գրպանից թաշկինակը հանելու, յեթե դուք նրան խանգարում եք այդ անելու, և քանի նա այսպես թե այնպես չի հաղթահարել ձեր ընդդիմությունը: Բայց բացի այս տարրական ու մակերևութային հասկացողությունից ազատության մասին, կա մի այլ անհամեմատ ավելի խորը հասկացողություն: Այդ հասկացողությունը բոլորովին դոյլություն չունի այն մարդկանց համար, ովքեր անընդունակ են փիլսոփայական մտածողության, խոկ այդպիսի մտածողության ընդունակ մարդիկ միայն այն ժամանակ են հասնում նրան, յերբ իրենց հաջողվում ե հաշիվսերը մաքրել գուալիզմի հետ և հասկանալ, վոր մի կողմից սուբյեկտի և մյուս կողմից ոբյեկտի միշտ բնավ դոյլություն չունի այն անդունդը, վոր գուալիստներն են յենթադրում:

Ուստ սուբյեկտիվիստն իր ուսուպիխական իդեալները հակադրում ե մեր կապիտալիստական իրականությանն ու նման հակադրումից գենը չի գնում: Սուբյեկտիվիստները սուլվել են դուլիզմի ճահիճը: Այսպես կոչված ուսւ «աշակերտների» իդեալներն անհամեմատ ավելի քիչ են նման կապիտալիստական իրականությանը, քան սուբյեկտիվիստների իդեալները: Բայց, չնայելով դրան, «աշակերտներին» հաջողվեց իդեալներն իրականության հետ միացնող կամուրջը գտնել: «Աշակերտները» բարձրացան մինչև մօնիզմ: Նրանց կարծիքով՝ կապիտալիզմն իր

սեփական զարգացման ընթացքով կհասցնի իր սեփական բացամանը և իրենց—ուսւ, և վոչ միայն ուսւ, աշակերտներին—իդեալների գոյությանը: Այդ պատմական տնհրածեսություն ե: «Ա.օվկերտն» այդ տնհրածեսության գործիքներից մեկն ե հանդիսանալ և չի կարող չնախդիսանալ այդպիսին՝ ինչպես իր հասարակական գրությամբ, այնպես և այդ գրությամբ ստեղծված իր մտավոր ու բարոյական բնավորությամբ: Այդ նույնպես անհրածեսության կողմն ե: Բայց քանի վոր նրա հասարակական գրությունը նրանում մշակել ե հատկապես այս, և վոչ թե մի ուրիշ բնավորություն, նա վոչ միայն անհրաժեշտության գործիք ե հանդիսանում և վոչ միայն չի կարող չնանդիսանալ այլ այլ ջերմուեն ցանկանում և հանդիսանալ և չի կարող չցանկանալ: Այդ՝ ազատության կողմն ե և այն ել այն ազատության, վոր բղիկը ե անհրաժեշտությունից, այսինքն՝ ավելի ձիշն ասած, այդ անհրաժեշտության հետ նույնացած ազատությունն ե, այդ՝ անհրաժեշտությունն ե՝ կերպարանափոխված ազատության \*): Այդպիսի ազատությունը նույնպես վորոշ ճշնշումից ազատ լինելն ե. նա նույնպես հակադիր ե վորոշ կաշկանդվածության. խոր սահմանումները չեն հերքում մակերևութայինները, այլ նրանց լրացնելով՝ պահպանում են նրանց իրենց մեջ: Բայց այդ գեպքում ինչպիսի ճնշման, ինչպիսի կաշկանդվածության մասին կարող ե խոսք լինել: Այդ սլարդ ե. այն բարոյական ճնշման մասին, վոր արգելակում և դուալիզմից չազատված մարդկանց յետանդը, այն կաշկանդվածության մասին, վորից տանջվում են այն մարդիկ, վորոնք չեն կարողանում կատմուրջ գցել իդեալներն իրականությունից անջրպետող անգունդի վրայով: Քանի անհատը փիլիսոփայական մտքի արի ջանքով չի նվաճել այդ ազատությունը, նա գենևա լիովին ինքն իրեն չի պատկանում և իր սեփական բարոյական տանջանքներով ամոթալի հարկ ե տալիս իրեն հակադիր արտաքին անհրաժեշտությանը: Բայց դրա փոխարեն նույն անհատը կծնվի նոր, լրիվ ու նրան մինչև այդ անծանոթ կյանքի համար այն վայր-

\*). «Die Notwendigkeit wird nicht dadurch zur Freiheit, dass sie verschwindet, sondern dass nur ihre noch innere Identität manifestiert wird». Hegel, Wissenschaft der Logik, Nürnberg. 1816. Հեղեղ Տրամաբանության գեառթյունը. 1816, ս. II, 42 281.

կյանից, հենց վոր զեն շպրտի այդ ատանջող ու ամոթալի ճնշման լուծը, և նրա ազատ գործունեյությունը կիանդիսանա անեւամեսուրյան գիտակցական ու ազատ արտահայտությունը<sup>\*)</sup>: Այն ժամանակ նա դառնում է խոշոր հասարակական ուժ, և այն ժամանակ արգեն այլևս վոչինչ չի կարող խանդարել նրան և վոչինչ չի խանդարի

Նենդ անարդարության զիթին  
Պայթել ինչպիս տաձու պատուհան...

### III

Մի անդամ ել. ավյալ յերեւյյթի անպայման անհրաժեշտության գիտակցումը կարող է միայն ուժեղացնել այն մարդու յեռանիքը, ով համակրում է այդ յերեւյյթին և ինքն իրեն նրա առաջացնող ուժերից մեկն է համարում: Յեթե այդպիսի մարդը, նրա անհրաժեշտությունը գիտակցած լինելով, ծալեր ձեռքերը, ապա նա դրանով ցույց կտար, վոր թվաբանությունը վաստ գիտե: Երոք, յենթադրենք, վոր Ա յերեւյյթն անհրաժեշտորեն պիտք է տեղի ունենա, յեթե պայմանների ավյալ գումարն առա կա լինի: Դուք ինձ ապացուցեցիք, վոր այդ գումարը մասամբ արդեն առկա յե, իսկ մասամբ լինելու յե ավյալ Տ ժամանակ: Այդ բանին համոզվելով յես, Ա յերեւյյթին համակրող մարդս, բացականչում եմ: «Ի՞նչպիս լավ է այդ», և փովում եմ քննելու ուղիղ մինչև ձեր նախագործակած դեպքի ուրախալի որը: Ի՞նչ դուքս կը դրանից: Անտ թե ինչ: Վորպեսզի Ա յերեւյյթը տեղի ու ունենար, դրա համար անհրաժեշտ գումարի մեջ ձեր հաշվով մանում եք նաև իմ գարծունեյալընթը՝ հավասար, առենք թե, ա-ի: Քանի վոր յես խոր քնի մեջ եմ ընկդմվել ուռափի և Տ մոմենտին ավյալ յերեւյյթի հասնելուն նպաստող պայմանների գումարը կլինի արգեն վոչ թե Տ, այլ Տ-ա, վորը փոփոխության և յենթարկում գործի վիճակը: Դուքս իմ տեղը բանի մի ուրիշ մարդ, վորը նույնպես մոտիկ եք անզործունեյության, բայց վորի վրա փրկարար ազդեցություն և գործել իմ ապատիքի որինակը, վոր նրան խիստ զայրացուցիչ և թվացել: Այդ գեղ-

\*) Նույն ծերուկ չեղելը մէ այլ տեղում պքանչելի տուում է: «Die Freiheit ist dies, Nichts zu wollen als sich», Werke, B. 12.

քում և ուժը կփոխարինվի օ ուժով, և յեթե ա-ն հավասար և եղին (ա=ի), ապա Ա-ի հասնելուն նպաստող պայմանների գումարը կմնա Տ, և Ա յերեւույթն այնուամենայնիվ տեղի կունենա միեւըն Տ մոմենտին:

Բայց յեթե իմ ուժը չի կարելի զերսյի հավասար համարել, յեթե յես ճարպիկ ու ընդունակ աշխատող եմ և ինձ վոչ վոք չի փոխարինել այդ գեղքում լրիվ Տ գումարը այլեւ չենք ունենա, և Ա յերեւույթը տեղի կունենա ավելի ուշ քան մենք յենթագրում ենք, կամ վոչ այն կատարելությամբ, ինչպես մենք սպասում եյինք, կամ նույնիսկ բոլորովին տեղի չի ունենա: Արեի նման այս պարզ ե, և յեթե յես այդ չեմ հասկանում, յեթե յես կարծում եմ, վոր Տ-ն մնում է Տ նաև իմ փոխարինվելուց հետո, ապա այդ միայն այն պատճառով, վոր յես հաշվել չգիտեմ: Բայց միթե մենակ յես հաշվել չգիտեմ: Դուք, վոր ինձ նախագուշակել եյիք, թե Տ գումարն անպայման առկա կլինի Տ մոմենտին, գուք ևս չեք նախատեսել վոր յես կպառկեմ քննելու ձեզ ետք ունեցած զրույցից անմիջապես հետո, գուք հավատացած եք յեղել, թե յես մինչև վերջն ել կինամ լավ աշխատող դուք նվազ հուսալի ուժն ընդունել եք առավել հուսալի ուժի տեղ: Հետեւապես, դուք ևս վատ եք հաշվել: Բայց յենթադրենք, թե դուք վոչնչի մեջ չեք սխալվել թե դուք ամեն ինչ նկատի յեք առել: Այդ գեղքում ձեր հաշվիվ այսպիսի կերպարանք կընդունի: Գուք առում եք, թե Տ մոմենտին Տ գումարն առկա կլինի: Պայմանների այդ գումարի մեջ կմտնի՝ վորպես բայցատկան մեծուրյուն՝ իմ փոխարինումը. կմտնի նաև վրապես դրական մեծաւրյուն, այն քաշալերող ազդեցությունը, վոր ուժեղ վոգու տեր մարդկանց վրա թողնում և այն վստահությունը, թե իրենց ձգութիւները և իրեալներն որյեկտելիք անհրաժեշտության ուրեյիկտիվ արտահայտություն են համարվում: Այդ գեղքում Տ գումարն իրոք առկա կլինի ձեր նշանակած ժամանակ, և Ա յերեւույթը տեղի կունենա: Թվում ե, թե այդ պարզ ե: Իսկ յեթե պարզ ե, ապա ինչու ինձ շփոթեցրեց Ա յերեւույթի անխուսափելիության միտքը: Ինչու ինձ թվաց, թե այդ միտքն ինձ անզործունեյության դրսապատճեն: Ինչու նրա մասին դատելիս յես մոռացել եյի: Ավարանության ամենահասարակ կանոնները: Հավանորեն մին պատճառով, վոր իմ գաստիարա-



կության հանգամանքների շնորհիվ յիս անգործունեցության ուժեղագույն ձգտում արդեն ունեցի, և իմ՝ ձեզ հետ ունեցած զրույցն այն կաթիւն եր, վոր լցորեց այդ գովելի ձգտման բաժակը: Ահա այս և բոլորը: Միայն այս իմաստով՝ իմ բարոյական բանական արժությունն ու անպիտօրյունը հայտարերելու արդի իմաստով՝ եթ այսեղ հանդես յեկել անհրաժեշտության գիտակցությունը: Իսկ այն այդ թոշնածության պատճու համարել բնավ չի կարելի: պատճառը նրա մեջ չե, այլ իմ դաստիարակության պայմաններում: Հետեապես... հետեապես՝ թվաբանությունը մի չափազանց հարգարժան ու ոգտակար գիտություն ե, վորի կանոնները չպետք ե մոռանան նույնիսկ պարոնայք փիլիսոփաները, և նույնիսկ հատկապես պարոնայք փիլիսոփաները:

Իսկ ինչպես կազդի տվյալ յերեւութիւն անհրաժեշտության գիտակցությունն ուժեղ մարդու վրա, վորը նրան չի համարում և նրա հասնելուն հակագրում ե: Այստեղ բանը մի փոքր փոխվում ե: Շատ կարելի յե, վոր նա կրուլացնի այդ մարդու դիմադրության յեռանդը: Բայց տվյալ յերեւութիւն հակառակորդները յերբ են համոզվում նրա անխուսափելիությանը: Յերբ նրան նպաստող հանգամանքները դառնում են շատ բազմաթիվ ու խիստ ուժեղ: Նրա հասնելու անխուսափելիության գիտակցումը նրա հակառակորդների կողմից և նրանց յեռանդի անկումն իրենցից ներկայացնում են սոսկ նրան նպաստող պայմանների ուժի արտահայտությունը: Նմանորինակ արտահայտություններն իրենց հերթին մտնում են այդ բարենպաստ պայմանների թիվ մեջ:

Բայց դիմագրելու յեռանդը կպակասի վոչ նրա բոլոր հակառակորդների մեջ, վոմանց մոտ նա միայն կաճի յերեւութիւն անխուսափելիությունը գիտակցելու հետեանքով, դառնալով հուսահատության յեռանդ: Պատմությունն ընդհանրապես, և Ռուսաստանի պատմությունը մասնավորապես, նման տեսակի յեռանդի ուսանելի քիչ որինակներ չի ներկայացնում: Հուսով ենք, վոր ընթերցողն առանց մեր ոգնության ել կիշիվ դրանք:

Այստեղ մեզ ընդհատում ե պ. Կարեյեվը, վորը թեպետ, հականալի յե, մեր հայացքներին չի ապատության ու անհրաժեշտության վերաբերմանը և բացի այդ չի հավանում մեր աշառությունն ուժեղ մարդկանց «ծայրահեղությունների» նկատ-

մամբ, բայց, այնուամենայնիվ, մեր ժուռնալի եջերում զահուշնակությամբ ե գիմավորում այն միաքը, թե անհատը կարող է խոշոր հասարակական ուժ հանդիսանալ: Մեծարգո պրոֆեսորը բացականչում ե ուրախությամբ: «Եյդ յես միշտ առել եմ»: Յեզ այդ ճշշտ ե: Պ. Կարեյեմը ու բոլոր ոռւբյեկտիվիստները պատմության մեջ անհատին միշտ շատ նշանավոր դեր են հատկացրել: Յեվ կար ժամանակ, յերբ այդ դեպի նրանց մեծ համակրանք եր առաջացնում առաջավոր յերիտասարդության մեջ, վորը հանրովուտ աղնիվ աշխատանքի յեր ձգտում, ուստի և, բնականաբար, հակիմած ե բարձր գնահատելու անհատական նախաձեռնության նշանակությունը: Բայց եյտպես սուբյեկտիվիստները յերբեք չեն կարողացել վոչ միայն լուծել, այլ նույնիսկ ճշշտ դնել պատմության մեջ անհատի ունեցած դերի հարցը: Նրանք «քննադատորնեն մտածող անհատների գործունեյությունը» հակադրում եյին հասարակական-պատմական շարժման որենքների աղղեցությանը և, այդպիսով, ստեղծում եյին գործուների թեորիայի ասես մի նոր ապահովեսակ: հիշած շարժման մի գործներ հանդիսանում եյին քննադատորնեն մտածող անհատները, իսկ իրեն մյուս գործոն՝ ծառայում եյին հենց շարժման սեփական որենքները: Արդյունքն այն յեղավ, վոր ստացվեց մի խորին անհամակերպություն, վորով բավականանալ կարելի: յեր միմիայն մինչև այն ժամանակ, քանի գործունյա «անհատների» ուշազրությունը կենտրոնացած եր որվա գործնական չարիքների վրա, քանի նրանք՝ այդ պատճառով՝ ժամանակ չունեյին փիլիսոփայական հարցերով զրագվելու: Բայց հենց վոր ութունական թվականներին ոկսված դադարը փիլիսոփայական խորհրդագությունների համար ակամա ազատ ժամանակ տվեց նրանց, ովքեր մտածելու ընդունակ եյին, սուբյեկտիվիստների ուսմունքի բոլոր կարերն սկսեցին պատառութեակ և նույնիսկ միանգումայն քանդրավել՝ Ակակի Ակակիեվիչի հոչակավոր շինելի նման: Վոչ մի կարկատան վոչինչ չեր շտկում, և մտածող մտրդիկ մեկը մյուսի հետեւց սկսեցին հրաժարվել սուբյեկտիվիզմից՝ վորպիս ակնբախորեն ու կատարելապես սնանկ մի ուսմունքից: Բայց, ինչպես միշտ լինում ե նման դեպքերում, նրա գեր յեղած ուսակցիան նրա հակառակորդներից վոմանց հասցրեց հակադիր ծայրահեղության: Յեթե սուբյեկտիվիստնե-

բից վոմանք՝ «անհատին» պատմության մեջ վորքան կարելի յէ ընդարձակ գեր հատկացնելու ձգտելով հրաժարվում եյին մարդկության պատմական շարժումն որինահամակերպ պրոցես ճանաչելուց, ապա նրանց նորագույն հակառակորդներից վումանք ել՝ այդ շարժման որինահամակերպ բնույթն ըստ կարելույն ավելի լավ ընդգծելու ձգտելով ըստ յերևութին, պատրաստ եյին մոռանալու, վոր պատմությունը մարդիկ են կերտում, և վոր այդ պատճառով անհամենցի գործությունները չի կարող պատմություն մեջ նշանակություն չունենալ: Նրանք անհատին ճանաչեցին զանազան անդույլատրելի յե, վորքան և այն ծայրահեղությունը, վորին հանգել եյին ավելի մոլի սուրբեկութիվիստները: Թեզր անրիբեզին զոհելը նույնչափ անհիմն ե, վարչափ և անտիրեզնի ի սեր քեզի մոռանալը: Ճիշտ տեսակետ միայն այն ժամանակ կդունվի, յերբ մենք կարողանանք սինթեզի մեջ միավորել ճշմարտության՝ նրանցում պարունակվող՝ մոմենտները<sup>\*)</sup>:

#### IV

Այդ խնդիրը մեզ վաղուց և հետաքրքրում, և վաղուց արդեն մենք ուզում եյինք հրավիրել ընթերցողին, վոր մեզ հետ միասին ձեռնամուխ լինի նրան: Բայց մեզ հետ եյին պահում վորոշ յերկյուղներ. մենք մտածում եյինք՝ գուցե մեր ընթերցողներն արդեն լուծել են իրենց համար այդ խնդիրը, և մեր առաջարկն ուշացած լինի: Այժմ մենք նման յերկյուղներ չունենք այլևս: Գերմանական պատմագիրները մեզ ազատել են դրանցից: Այս մենք լուրջ ենք առում: Բանն այն ե, վոր վերջին ժամանակների ընթացքում գերմանական պատմագիրների միջն բավականին տաք վեճ եր վարդում պատմության մեջ յեղած մեծ մարդկանց մասին: Այդպիսի մարդկանց քաղաքական գործունեյության մեջ վոմանք հակված եյին տեսնելու պատմական զարգացման գլխավոր և գրեթե յեղակի զապանակը, իսկ ուրիշները պնդում եյին, վոր նման հայացքը միակողմանի յե,

\*) Դեպի սինթեզը ձգաելու մեջ մեզ առաջ ե ավել նույն պ. Կարեյիվ Բայց, գրաբառաբառ, նու ավելի գենը չգնաց այն ճշմարտությունը զիտակելուց, թե մարզը բազմացած ե հոգուց և մարմնից:

և վոր պատմական գիտությունը պետք ե նկատի ունենա վոչ թե միայն մեծ մարդկանց գործունեյությունը և վոչ միայն քաղաքական պատմությունը, այլ ընդհանրապես պատմական կյանքի ամբողջությունը (das Ganze des geschichtlichen Lebens): Վորպես մեկն այս վերջին ուղղության ներկայացուցիչներից՝ հանգես յեկավ կարլ Լամպրեխտը՝ պ. Պ. Նիկոլայեվի ոռուսերեն թարգմանած «Գերմանական ժողովրդի պատմության» հեղինակը: Լամպրեխտի հակառակորդները նրան մեղադրում եյին «կոլեկտիվիզմի» և մատերիալիզմի մեջ: Նրան—horribile dictu—նույնիսկ միևնույն մակարդակի վրա եյին դնում «առցիալ-դեմոկրատական աթեիստների» հետ միասին, ինչպես նա յեր արտահայտվել վեճի վերջում: Յերբ մենք ծանօթացանք նրա հայցքներին, տեսանք, վոր այն մեղադրանքները, վոր հարուցել եյին խեղճ գիտնականի գեմ, միանգամայն անհիմն եյին: Միենույն ժամանակ մենք համոզվեցինք, վոր արդի գերմանական պատմագիրներն ի վիճակի չեն լուծելու պատմության մեջ անհատի ունեցած գերի հարցը: Այն ժամանակ մենք մեզ իրավունք համարեցինք յենթագրելու, վոր այդ հարցը մինչև այժմ ել չլուծված և մնում նաև ուստ ընթերցողներից գոմանց համար, և վոր նրա առթիվ այժմ ել կարելի յե շահեկանությունը վոչ ըուրուղին զորքի վորոշ թեորետիկ ու պրակտիկ բան ասել:

Լամպրեխտն ականավոր պետական մարդկանց հայացքների մի ամբողջ կալեկցիա յե հավաքել (eine artige Sammlung—ինչպես ինքն ե արտահայտվում). այդ հայացքները վերաբերում են այն առնչությանը, վոր այդ մարդկանց սեփական գործունեյությունն ունի այն միջավայրի հետ, վորտեղ նա տեղի յե ունեցել, բայց իր բանավեճի մեջ նա սահմանափակվել ե առայժմ Բիումարկի միքանի ճառերն ու կարծիքները վկայակոչելով: Նա քերում ե 1869 թ. ապրիլի 16-ին հյուսիս-գերմանական ուայխստագում յերկաթե կանցլերի արտառանած հետեյալ խոսքերը, «Մենք չենք կարող, պարոններ, վոչ անտեսել անցյալի պատմությունը, վոչ ել ստեղծել ապագան: Յես կցանկանացի ձեզ պահպանել այն մոլորությունից, վորի շնորհիվ մարդիկ առաջ են գցում իրենց ժամացույցը, յերևակայելով, թե զբանով նրանք արագացնում են ժամանակի ընթացքը: Սովորաբար իխտ մեծացնում են իմ ազգեցությունն այն դեպքերի վրա, վորոնց յես հենցին եմ,

բայց այսուամենայնիվ վոչ վոքի մաքով չի անցնի պահանջել ինձնից, վորպեսդի յետ պատմություն կերտեմ: Այդ անհնարին կլիներ ինձ համար նույնիսկ ձեզ հետ միացած, թեսկոտ և միացած, մենք կարող կլինեցինք ամբողջ աշխարհին ընդդիմադրել: Բայց մենք չենք կարող պատմություն կերտել մենք պետք ե սպասենք, մինչև նա կերտվի: Մենք չենք արագացնի պառուղների հասունացումը՝ նրանց տակ ճրագ գնելով. իսկ յեթե մենք պառուղները խակ-խակ պոկենք, ապա միայն կիսանգարենք նրանց աճմանն ու կիչացնենք նրանց»: Փոլիի վկայության վրա հիմնը ըլքելով՝ կամպրեխտը բերում ե նույնպես ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Բիոմարկի բաղմից արտահայտած կարծիքները: Դրանց ընդհանուր իմաստը դարձյալ այն ե, թե «մենք չենք կարող կատարել պատմական խոշոր գեպքերը, այլ պետք ե համակերպենք իրերի բնական ընթացքի հետ և սահմանափակենք ապահովելով մեզ համար այն, ինչ արդեն հասունացել ե»: Լամպրեխտը զրանում խոր ու կատարյալ ճշմարտություն ե տեսնում: Նրա կարծիքով, ժամանակակից պատմագիրն այստեղ կերպ մտածել չի կարող, յեթե միայն կարողանում ե գեպքերի խորքը թափանցել և իր տեսագաշտը չսահմանափակել չափազանց կարծ ժամանակաշրջանով: Կարմր եր արդյոք Բիոմարկը Դերմանիան հետ դարձնել գեպի բնական անտեսության շրջանը: Այդ նրա համար անհնարին կլիներ նույնիսկ այն ժամանակ, յերբ նա իր հզորության գագաթնակետին եր գտնվում: Պատմական ընդհանուր պայմաններն ավելի ուժեղ են, քան ամենաուժեղ անհատները: Նրա դարաշրջանի ընդհանուր ընույթը մեծ մարդու համար «Եմպիրիկորեն տվյալ անհրաժեշտություն» և հանդիսանում:

Իր հայացքն ունիվերսալ անվանելով՝ այսպես ե դատում լամպրեխտը: Դժվար չե «ունիվերսալ» հայացքի թույլ կողմը նկատել: Բիոմարկի՝ վերը բերած կարծիքները շատ հետաքրքրական են վորպես հոգեբանական փաստաթուղթ: Նախկին գերմանական կանցլերի գործունեյությանը կարելի յե չհամակրել, բայց չի կարելի ասել թե այն չնշին ե յեղել, թե Բիոմարկն աչքի յե ընկել «Քվիետիզմով»: Զե վոր նրա մասին ե ասել լատառ՝ «Ռեակցիայի սպասավորները ճոռամարտներ չեն, բայց տապաված, վոր պլողեաը նման սպասավորներ ըստ կարելույն

շատ ունենայ»: Յեվ ահա հաճախ իրոք յերկաթե յնուանդ հանդես բերող հենց այս մարդն իրեն կատարելապես անզոր եր համարում իրերի բնական ընթացքի հանդեպ, հավանորեն իրեն վորպես պատմական զարգացման հասարակ գործիք դիտելով, այդ մի անգամ և ցույց ե տալիս, վոր յերևույթները կարելի յե տեսնել անհրաժեշտության լույսի տակ ու միաժամանակ շատ յեռանդուն գործիչ լինել: Բայց հենց այս տեսակետից ել հետաքրքրական են Բիոմարկի կարծիքները, իսկ դրանք պատմության մեջ անհատի ունեցած գերի հարցի պատասխանը համարել անկարելի յե: Բիոմարկի ասելով՝ գեպքերն իրենք իրենց են կատարվում, իսկ մենք կարող ենք ապահովել մեզ համար այն, ինչ այդ գեպքերն են նախապատրաստում: Բայց «ապահովման» յուրաքանչյուր ակտ իրենից նույնպես պատմական գեպք ե ներկայացնում, ինչնույն զանազանվում այդպիսի գեպքերը նրանցից, վորոնք իրենք իրենց են տեղի ունենում: Իրականության մեջ գրեթե ամեն մի պատմական գեպք վորեն մեկի համար նախորդ զարգացման արդեն հասունացած պառուղների «ապահովում» ու միաժամանակ ապագա պառուղները նախապատրաստող գեպքերի շղթայի ողակներից մեկն ե հանդիսանում: Ուրեմն ինչպես կարելի յե «ապահովման» ակտերը հակագրել իրերի բնական ընթացքին: Ինչպես յերևում ե, Բիոմարկն ուզեցել ե ասել, թե պատմության մեջ գործող անհատներն ու անհատների խմբերը յերբեք ամենակարող չեն յեղել ու յերբեք չեն լինի: Այդ հասկանալի յե, յենթակա չե ամենափոք կառկածի անգամ: Բայց մենք, այնուամենայնիվ, կցանկանայինք իմանալ, թե ինչից ե կախված նրանց, իհարկե, բնավ վոչ ամենակարող ուժը. ինչպիսի հանգամանքներում ե նա աճում և ինչպիսի հանգամանքներում նվազում: Այդ հարցերին չի պատասխանում վոչ Բիոմարկը և վոչ ել պատմությանը ունիվերսալ հայացքով նայելու այն գիտական պաշտպանը, վոր մեջ ե բերում նրա խոռըերը:

Ճիշտ ե, կամպրեխտի մոտ պատահում են նաև ավելի համոզիչ մեջքերումներ \*): Նա բերում ե, որինակ, Ֆրանսիայի արդի պատ-

\*) Զողովակելով Լամպրեխտի այլ փելաստիկայան-պատմական հոգվածները, մենք նկատի ունեցինք և կունենանք նրա. «Der Ausgang der geschichtswissenschaftlichen Kampfes» հոգվածը, Die Zukunft, 1897, № 41:

մական գիտության ամենաականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Մոնղի հետևյալ խոսքերը. «Պատմադիրները չափազանց սովոր են բացառիկ ուշադրություն դարձնելու մարդկային դործունելության փայլուն, բարձրագոչ ու անհարատե արտահայտություններին, մեծ գեղքերին ու մեծ մարդկանց՝ փոխանակ նկարագրելու մարդկային զարգացման իրոք հետաքրքրական և անանցանելի մասը կազմող տնտեսական պայմանների ու սոցիալական հիմնարկների մեծ ու գանդաղ շարժումները,—այն մասը, վոր փորոշ չափով կարելի յե որենքների վերածել ու մինչև փորոշ աստիճան ձշգրիտ վերլուծության յենթարկել: Իրոք, կարենոր գեղքերն ու անհատները կարենոր են հենց վորպես այդ զարգացման տարբեր մոմենտների նշաններ ու սիմբոլներ: Մինչդեռ պատմական կոչվող գեղքերի մեծամասնությունն այնպես ե հարաբերում իսկական պատմությանը, ինչպես մակընթացությունների ու տեղատվությունների խոր ու մշտական շարժմանը հարաբերում են ալիքները, վորոնք առաջանում են ծովի մակերևույթին, մի ակնթարթ փայլում լույսի վառ հրով, ապա փայլում ավաղոտ ափին զարնվելով՝ իրենցից հետո վոչ մի հետք չթողնելովք: Լամպեխտալ հայտարարում ե, թե ինքը պատրաստ է Մոնոյի այս խոսքերից յուրաքանչյուրի տակ ստորագրելու: Հայտնի յե, վոր գերմանական գիտնականները չեն սիրում համաձայնել ֆրանսիացիների հետ, իսկ ֆրանսականները՝ գերմանացիների: Այդ պատմառով ել բեղդիական պատմագիր Պիրեննը առանձին հաճույքով ե ընդգծել «Revue Historique»-ում Մոնոյի ու Լամպեխտի պատմական հայացքների այս զուգաղիպությունը: «Այդ համաձայնումը խիստ նշանակալից ե, —նկատել ե նա:— Ըստ յերևութին, նա ապացուցում ե, վոր ապագան պատկանում ե նոր պատմական հայացքներին»:

V

Պիրեննի հաճելի հույսերի մեջ մենք մասն չունենք: Ապագան չի կարող պատկանել անորոշ ու մութ հայացքներին, իսկ հենց այդուհի յեն Մոնոյի և հատկապես լամպեխտի հայացքները: Զի կարելի, իհարկե, չփողջունել այն ուղղությունը, վոր պատմական գիտության կարենորագույն խնդիրն ե հայտարարում հասարակական հիմնարկների ու տնտեսական պայմանների

ուսումնագիրությունը: Այդ գիտությունն անչափ առաջ կշարժվի, յերբ նրա մեջ վերջնականորեն արմատանա նման ուղղությունը: Բայց, նախ, Պիրեննը սփավում ե այդ ուղղությունը նոր համարելով: Պատմական գիտության մեջ նա սկիզբ ե առել արդեն XIX դարի քսանական թվականներին. Գիզոն, Մինյեն, Աղյուսակներին, իսկ հետագայում Տոկիվը և ուրիշները նրա փայլուն ու հետևողական ներկայացուցիչներն են յեղել: Մոնոյի և կամպրեխտի հայացքները հին, բայց խիստ յերեկի բնագրի ոսկ դգույն պատճենն են: Յերկրորդ, վորքան ել խորաթափանց եյին իր ժամանակի համար Գիզոյի, Մինյեյի և Գրանսուական այլ պատմագիրների հայացքները, այնուամենայնիվ, նրանց մեջ շատ բան մնացել եր չպարզաբանված: Նրանցում չկա ձգորիտ ու լրիվ պատմախան այն հարցին, թե ինչ գեր ունի պատմության մեջ անհատը: Մինչդեռ պատմական գիտությունը, իրոք, պետք ե լուծի այդ հարցը, յեթե այդ գիտության ներկայացուցիչներին վիճակված և ազատագրվել իրենց առարկայի նկատմամբ ունեցած միակողմանի հայացքից: Ապագան պատկանում ե այն գլուցին, վոր, ի միջի այլոց, կտա նաև այդ հարցի լավագույն լուծումը:

Գիզոյի, Մինյեյի ու այս ուղղության այլ պատմագիրների հայացքները տասնութերորդ դարի պատմական հայացքների նկատմամբ սեակցիա հանդիսացան և կազմում են նրանց անհիքանությունը: Տասնութերորդ դարում պատմության վիլխոսիայությամբ զրադիող մարդիկ ամեն ինչ վեր ելին ածում անհատների գիտելիքան գրածություններ: Էնդհանուր կանոնից, ճիշտ ե, բացառություններ կային նաև այն ժամանակ. այսպես՝ Վիկոյի, Մոնտեսքյոյի և Հերդերի վիլխոսիայությամական տեսագաշտը շատ ավելի լայն եր: Բայց մենք բացառությունների մասին չենք իսոսում. տասնութերորդ դարի իմաստաներների ահագին մեծամասնությունը պատմությանը նայում եր ճիշտ այնպես, ինչպես մենք առաջինք: Այդ կողմից խիստ հետաքրքրական և այժմ նորից կարդալ, Մարլիի պատմական աշխատությունները: Նրա ասելուց ստացվում ե, վոր կը ետացիների սոցիալ-քաղաքական կյանքն ու բարեկերն ամբողջովին ստեղծել ե Մինոսը, իսկ Լիկուրգոսը նման ծառայություն Սպարտային և մատուցել Յեթե սպարտացիներն «արհամարհում եյին» նյութական հարը-

տությունը, ապա դրանով նրանք պարտական էին հենց լի-  
կուրգոսին, վորս, «այսպես առած, իջավ իր համաքաղաքացին-  
ների հոգու խորքն ու խեղդեց այնակե հարստության սիրո  
աղջը» (descendit pour ainsi dire jusqu'au fond du cœur  
des citoyens etc. \*): Իսկ յեթե սպարտացիները հետագայում  
թողին այն ուղին, վոր իրենց ցույց եր տվել իմաստուն լիկուր-  
զուր, ապա դրա մեղքը լիդանդրինն ե, վորը հավատացրեց նրանց,  
թէ «նոր ժամանակներն ու նոր համագամանքները նրանցից պա-  
հանջում են նոր կանոններ ու նոր քաղաքականություն» \*\*):  
Այսպիսի հայացքի տեսակետով գրված հետազոտությունները  
գիտության հետ ընդհանուր շատ քիչ բան ունեյին և գրվում  
եյին, վորպես քարոզներ, միայն ի ոեր նրանցից բղխող բարո-  
յական «գլասերի»: Հենց նման հայացքների գեմ ել ըմբռոտա-  
ցան ուստավքացիայի ժամանակների ֆրանսական պատմագիր-  
ները: XVIII դարավերջի ցնցող գեղքերից հետո այլևս բացար-  
ձակապես անհնարին եր մտածել, թէ պատմությունն ավելի կամ  
պակաս ականավոր և ավելի կամ պակաս ազնիվ ու լուսավոր-  
ված անհատների գործն ե, վորոնք իրենց կամայականությու-  
նով ներջնում են տգետ, բայց հլու մասային այս կամ այն  
զգացումներն ու համացողությունները: Ընդումին՝ պատմության  
այսպիսի փիլիսոփայությունը զայրացնում եր բուրժուազիայի  
թեորետիկների պլերեյական հպարտությունը: Այսուղ արտա-  
հայտիցին այն նույն զգացումները, վորոնք արտահայտվեցին  
զեռ XVIII դարում բուրժուական դրամայի սկզբնավորման ժա-  
մանակ: Թյեռին հին պատմական հայացքների գեմ պայքարելիս,  
ի միջի այլոց, նույն այն փաստարկներն եր գործադրում, վոր  
Բուրժեն ու ուրիշները ըերում եյին այդ հին եսթեռիկայի \*\*\*):  
զեմ: Վերջապես, այն մըրիկները, վոր զեռ մոտիկ անցյալում  
ապրել եր Ֆրանսիան, շատ պարզ ցույց ավին, վոր պատմական  
զեղքերի ընթացքը վորոշվում ե բնավ վոչ միայն մարդկանց

\*) Տե՛ս Oeuvres complètes de l'abbé de Mably, Londres 1783, tome quatrième n. 3, 14—22, 24 et 192:

\*\*) Տե՛ս նույն տեղը, էջ 10:

\*\*\*) Համեմատիք «Ֆրանսիայի պատմության» մասին դրած առաջին  
համակերպ «Essai sur le genre dramatique sérieux»-ի հետ, Բոմարշէի «Oeuvres  
complètes»-ի առաջին հասողի մեջ:

գիտակցական վարմունքներով. հենց միայն այս հանգամանքը  
պետք ե ըերեր այս մտքին, վոր այդ գեղքերը տեղի յեն ունե-  
նում մի ինչ-վոր թագուն անհրաժեշտության աղդեցության  
տակ, վորը, բնության տարերային ուժերի նման, վործում ե  
կուրորեն, բայց վորոշ անխախտ որենքների համեմատ: Արտա-  
կարգ նշանակելի յե,—թեպես մինչև այժմ, վորքան մենք գի-  
տենք, վոչ վոր զեռ չի մտանանցել—այն փասոր, վոր պատ-  
մության, վորպես որենահամակերպ պրոցեսի մասին յեղած նոր  
հայացքներն առավելապես հետևողականորեն անց եյին կաց-  
նում սեստավը արացիայի դարաշրջանի ֆրանսական պատմագիր-  
ները, հենց այն աշխատությունների մեջ, վորոնք նվիրված  
եյին ֆրանսական հեղափոխությանը: Դրանցից եյին, ի միջի  
այլոց, Մինյեյի աշխատությունները: Շատորրիանը պատմական  
նոր գորոցն անվանեց Փատալիստական: Զեակերպիլով այն իլին-  
գիրները, վոր այդ գորոցը առաջադրում եր հետախուզողին, նա  
ասում եր. «Այս սիստեմը պահանջում ե, վորպեսի պատմագիրն  
ամենավայրագ գաղանությունների մասին պատմի առանց ցառ-  
ման, ամենավիճ առաքինությունների մասին խոսի առանց սիրո  
և իր սասցալաղ հայացքով հասարակական կյանքի մեջ տեսնի  
ոտոկ այն անդիմակա որենքների արտահայտությունը, վորոնց  
շնորհիվ ամեն մի յերկույթ տեղի յե ունենում հենց այնպես,  
ինչպես նա անխուսափելիորեն պետք ե տեղի ունենա\*: Այս  
ինքարկե, ճիշտ չե: Նոր գորոցը պատմագրից ընավ չեր պահան-  
ջում անկրքոտություն: Ոգյուստեն Թյեռին նույնիսկ ուղղակի  
հայտարարեց, վոր քաղաքական կրքերը, որելով հետախուզողի  
միտքը, ճշմարտությունը հայտնագործելու զորավոր միջոց կա-  
րող են հանդիսանալ \*\*): Յեկ բավական և թեկուզ մի քիչ ծա-  
նոթանալ Գիլոյի, Թյեռի կամ Մինյեյի պատմական աշխատու-  
թյուններին տեսնելու համար, վոր նրանք շատ ջերմորեն հա-  
մակրում եյին բուրժուազիային ինչպես նրա՝ աշխարհիկ ու հո-  
գոր արիստոկրատիայի գեմ մղած պայքարի մեջ, այնպիսի և

\*) Oeuvres complètes de Chateaubriand, Paris 1840, VII, p. 58: Ըն-  
թերցողի ուշադրության ենք հանձնում նու հետևյալ եջը. կարելի յե կար-  
ծել, թե այն գրել ե պ. Նիկ. Մինյալովակին:

\*\*) Տե՛ս Considerations sur l'histoire de France, վորոնք կցված են  
«Recits des temps Merovingiens»-ի, Paris, 1880, p. 72:

ծնունդ առնող պրոլետարիատի պահանջները ճնշելու նրա ձըգուման մեջ Բայց անվիճելին ահա թե ինչն եւ պատմական նոր գլորցն առաջացավ ՀԻ դարի քսանական թվականներին, այսինքն՝ այնպիսի մի ժամանակ, յերբ արիստոկրատիան արդեն պարտվել եր բուրժուազիայից, թեղեառ գեռեա փորձում եր վերականգնել իր հին արտօնություններից ինչ-ինչ բաներ։ Նրանց գառակարգի հաղթանակի հաղարտ դիտակցությունն արտահայտվում եր նոր գլորցի պատմազիների բոլոր գատողությունների մեջ։ Յեկ վորովինեան բուրժուազիան յերբեք չի հատկանշվել զգացմունքների առվետական նրբությամբ, ուստի նրա դիտական ներկայացուցիչների դատողությունների մեջ յերբեմն լսելի յե լինում դաժան վերաբերմունք գեղի պարտվածները։ «Le plus fort absorbe le plus faible,—ասում է Գրդոն իր պոլիմիկական բրոյյուրներից մեկի մեջ—et il est de droit» (ուժեղը կլանում է թույլին, և նա իրավունք ունի այդ անելու)։ Վոչ պակաս դաժան և նրա վերաբերմունքը գեղի բանվոր գառակարգը։ Այդ դաժանությունն ել հենց, վոր յերբեմնակի հանգիստ անկրքության ձեւ եր ընդունում, մոլորության մեջ և գցել Շատորիանին։ Բացի այդ, այն ժամանակ գեռ լիովին պարզ չեր, թե ինչպես պետք ե հատկանալ պատմական շարժման որինականիւրայունը։ Վերջապես, նոր գլորցը ֆատալիստական կարող եր թվալ հենց այն պատճառով, վոր որինահամակերպության անօակետին ամրորեն կանգնելու ձգտելով, նա քիչ եր զբաղվում պատմական մեծ անհատներով\*)։ Այն մարդիկ, վորոնք դատիքարակվել եյին տասնութերորդ դարի պատմական գաղափարներով, գժվարությամբ եյին հաշտվում սրա հետ։ Ամեն կողմից առարկություններ տեղացին նոր պատմազիների վրա, և այն ժամանակ ոկոլից մի վեճ, վոր, ինչպես մենք տեսանք, գեռ մինչև որս ել չի վերջացել։

\*) Մինյեյի «Թրանսական հեղափոխության պատմության» յերբոր հրատարակությանը նվիրված հոդվածում Սեն-Բելի այսպիս բնութագրեց այս պատմազի վերաբերմունքը գեղի անհատները։ «A la vue des vastes et profondes émotions populaires qu'il avait à décrire, au spectacle de l'impuissance et du néant où tombent les plus sublimes génies, les vertus les plus saintes, alors que les masses se soulèvent, il s'est pris de pitié pour les individus, n'a vu en eux pris isolément que faiblesse et ne leur a reconnu d'action efficace, que dans leur union avec la multitude».

1826 թվի հունվարին Մինյեյի «Թրանսական հեղափոխության պատմության» հինգերորդ և վեցերորդ հատորների լույս տեսնելու առթիվ («Globe»)-ում Սեն-Բելի գրում եր, «Պուրաբանչյուր ավյալ բողեյին մարդ կարող է իր կամքի հանկարծական վճառվի գեղարքերի ընթացքի մեջ մացնել նոր, անողոտելի ու փոփոխական մի ուժ, վորն ընդունակ է նրան այլ ուղղություն տալու, բայց վորը, ուսկայն, չափումի չի յենթարկվում իր փոփոխականության հետեւանքով»։ Հարկավոր չե մտածել, թե Սեն-Բելի յենթարկում եր, իբր թե մարդկային կամքի հանկարծական վճառները» յերեան են գալիս առանց վորեւ պատճառի։ Վոչ, այդ շատ նախի կինները նա պնդում եր միայն, վոր հատարակական կյանքի մեջ ավելի կամ տակաս կարենոր գեր խաղացող մարդու մտավոր ու բարոյական հատկությունները, նրա տաղանդը, գիտելիքները, վճառկանությունը կամ տնվեմականությունը, քաջությունը կամ վախկուությունը և այլն՝ չեն կարող մնալ առանց զգալի ազդեցության գեղարքերի ընթացքի ու վախճանի վրա, այնինչ այդ հատկությունները բացարձակում են վոչ միայն ժողովրդական զարգացման ընդհանուր որենքներով, նրանք միշտ և մի նշանակելի չափով զոյանում են այն բանի ներգործության տակ, վոր կարելի յե անգանել մատնավոր կյանքի պատահականություններ։ Միքանի որինակ բերենք այս, առենք, թվում ե թե առանց այն ել պարզ միտքը պարզաբանելու համար։

Ավտորիական ժառանգության համար մղված պատերազմում ֆրանսական զորքերը միքանի փայլուն հազթանակներ տարան, և ֆրանսիան, ըստ յերեսութին, կարող եր Ավտորիայից ձեռք բերել բավական խոչը հողամասեր արդի Բելգիայում։ Բայց Լյուդովիկ X V -ը չեր պահանջում այդ զիջումը, փորվինեան նա պատերազմում եր, ըստ իր հայտարարության, վոր թե վորպես վաճառական, այլ վորպես արքա, և Ամիենի հաշտությունը վոչինչ չտվեց ֆրանսուացիներին։ Իսկ յեթե Լյուդովիկ X V -ն ունենար այլ բնավորություն, այդ զիջումը գուցե Ֆրանսիայի տերիտորիան մեծանար, վորի հետեւանքով միքիչ կփոխվեր նրա տնտեսական ու քաղաքական զարգացման ընթացքը։

Ցոթնամյա պատերազմն, ինչպես հայտնի յե, Ֆրանսիան

մղել և արդեն գտշնակցած Ավոտիայի հետ։ Ասում են, վոր այս գաշինքը կնքված և յեղել տիկ։ Պոմպադուրի ուժեղ աջակցությամբ, վորը խիստ շոյվել եր այն բանից, վոր հալարա Մարիամի թերեղան նրան ուղղած իր նամակում նրան անվանել եր իր քուզենը կամ իր թանգարին ընկերուհին (օքն եօն ամի) Ռւսակի կարելի յե ասել, վոր յեթե Լյուդովիկ ԽՎ-ը ունենար ավելի խիստ բարքեր, կամ յեթե նա ավելի քիչ յենթարկվեր սիրուհիների ազգեցությանը, ապա տիկ։ Պոմպադուրը գեղքերի ընթացքի վրա նման աղքեցություն ձեռք չեր բերի, և դրանք այլ ընթացք կոստանային։

Այսուհետեւ Ֆրանսիայի համար յոթնամյա պատերազմն անհաջող յեղավ։ Նրա գեներալները կրեցին մի շարք ամենամոթավի պարտություններ։ Ընդհանրապես նրանք ավելի քան տարորինակ եյին պահում իրենց։ Ռիշելյոն զբաղված եր թալանով, իսկ Սուրբիզն ու Բրույին շարունակ խանգարում եյին իրար։ Այսպես, յերբ Բրույին գրոհեց թշնամուն Ֆիլինհառուհինի մոտ, Սուրբիզը թնդանոթի ձայնը լսում եր, բայց ընկերոջն ոգնելու չփնաց, ինչպես այդ պայմանավորված եր, և ինչպես նա, անկառակած, պարտավոր եր անել, և Բրույին հարկադրված յեղավ նահանջել։<sup>\*</sup> Ծայրահեղորեն անընդունակ Սուրբիզին հովանավորում եր հենց նույն տիկ։ Պոմպադուրը Յեվ գարձյալ կարելի յե ասել, վոր յեթե Լյուդովիկ ԽՎ-ը պակաս հեշտաներ լիներ, կամ յեթե նրա սիրուհին չխառնվեր քաղաքականության մեջ, ապա գեղքերն այդպիս անբարենպատ չեյին գոտավորվի Ֆրանսիայի համար։

Ֆրանսական պատմագիրներն ասում են, վոր Ֆրանսիայի համար բնավ կարիք ել չկար յելքուպական մայր ցամաքում պատերազմելու, այլ հարկավոր եր ճովի վրա կենարոնացնել բռոր ճիգերը։ Անզիւայի վոտնձգություններից իր գաղութները պաշտպանելու համար։ Իսկ յեթե նա այլ կերպ վարվեց, ապա այսանդ գարձյալ մեղավոր եր անխուսափելի տիկ։ Պոմպադուրը, վոր ցանկանում եր իր «սիրելի ընկերունի» Մարիամի թերեղային

<sup>\*</sup>) Ուրիշները, առկայն, ասում են, վոր մեղավոր եր վոչ թե Սուրբիզը այլ Բրույին, վորը չսպասեց ընկերոջը, չցանկանալով նրան մասնակից անել հաղթանակի փառքին։ Մեզ համար զա վոչ մի նշանակություն չունի, վորովհակ վոչ մի բանով չի փոխում զործը։

սիրաշահել։ Յոթնամյա պատերազմի հետևանքով՝ Ֆրանսիան զրկվեց իր լավագույն գաղութներից, և այդ, անկառակած, մեծապես ազդեց նրա տնտեսական հարաբերությունների զարգացման վրա։ Կանացի սնավիտառությունն այսուղ մեր զեմն և յելնում տնտեսական զարգացման ազդեցիկ «գործոնի» դերում։

ՊԲոք են արդյոք ուրիշ որինակներ։ Բերենք մեկն եւ վորը գուցե ամենից ապշեցուցիչն եւ Նույն յոթնամյա պատերազմի ժամանակ՝ 1761 թ. ոգոստոսին, ավատրիական զորքերը Սիլեզիայում միանալով սուսական զորքերին, Շարինադուի մոտ շրջապատեցին Ֆրիզըիին։ Նրա գրությունը հուսահատական էր, բայց դաշնակիցները գանդապում եյին հարձակիվելու, և գեներալ Բուտուրլինը քամ որ թշնամու գեմ կանգնելուց հետո նույնիսկ միանգամայն հուսացավ Սիլեզիայից, թողնելով այնտեղ իր ուժերի լոկ մի մասը, վորպես ոժանդակություն ավատրիական գեներալ Լաուդոնի։ Լաուդոնը գրավեց Շվիցենիցը, վորի մոտ կանգնած եր Ֆրիզըիին։ Բայց այս հաջողությունը սակավարժեք եր։ Իսկ յեթե Բուտուրլինն ունենար ավելի վճռական բնավորություն։ Յեթե դաշնակիցները հարձակիվելին Ֆրիզըիին վրա, ժամանակ չտալով նրան իր բանակատեղում խրամատվելու։ Հնարավոր ե, վոր նրանք զվարվին ջարգեցին նրան, և նա ստիպված լիներ յենթարկվելու հաղթողների բոլոր պահանջներին։ Յեվ այս տեղի ունեցավ հազիվ մի քանի ամիս նրանից առաջ, յերբ մի նոր պատահականություն՝ Յեղիսաբեթ թագուհու մահը միանգամբ ու մեծապես փոխեց իրերի զրությունը։ Ֆրիզըիի համար բարենպատ իւմաստով։ Հարց ե ծագում։ Բնչ կլիներ, յեթե Բուտուրլինն ունենար ավելի շատ վճռականություն, կամ յեթե նրա տեղը լիներ Սուվորովի նման մի մարդ։

«Ֆատալիստ» պատմագիրների հայացքները զննելիու Սինտենիլ արտահայտել և մի այլ նկատառում ես, վորի վրա նույնպես պետք ե ուշադրություն զարձնել։ Մինչեյի «Ֆրանսական հեղափոխության պատմություն» մասին գրած այն հոդվածում, վորից մենք արգեն մեջբերում ենք արել, նա ապացուցում եր, վոր ֆրանսական հեղափոխության ընթացքն ու յելքը պայմանավորված եյին վոչ միայն այն ընդհանուր պատճառներով, վորոնք նրան առաջ եյին բերել և վոչ միայն այն կրքերով, վոր նա իր հերթին առաջ եր բերում, այլև բազմաթիվ մանր

յերևույթներով, վորոնք վրիպում են հետախոռողի ուշագրությունից և նույնիսկ բարորովին չեն մտնում հատկապես այսպես կոչվող հասարակական յերևույթների շարքը: «Այն ժամանակ, յերբ այդ (հասարակական յերևույթներից առաջացած) կրքերը գործում եյին, — զրում եր նա, — բնության փեղիկական ու փեղողակական ուժերը նույնպես անզործ չեյին. քարը շարունակում եր յենթարկվել ծանրության ուժին, արյունը չիր դադարում յերակների մեջ շրջան անելուց: Մթի գեպքերի ընթացքը չեր փոխվի, յեթե, գիցուք, Միքարոն չմեռներ տենդից. յեթե պատահաբար ընկած ազյուսը կամ ապոպլեքսիական կաթվածը սպաներ Ռոբեռտյերին. յեթե գնդակը տապալեր Բոնապարտին: Յել միթի գուք սիրտ կանեք պնդելու, վոր նրանց վախճանը նույնը կլիներ: Իմ յենթագրաների նման պատահականությունների բավարար քանակի գեպքում այդ վախճանը կարող եր բոլորովին հակառակը լինել այն վախճանին, վորը, ձեր կարծիքով, անխուսափելի յեր: Իսկ չե վոր յես իրավունք ունեմ նման պատահականություններ յենթագրելու, վորովհետև գրանք չեն բացառում վոչ հեղափոխության ընդհանուր պատճառները և վոչ այդ ընդհանուր պատճառներից առաջացած կրքերը: Այնուենու նա բերում և հայտնի գիտողությունն այն մասին, թե պատճությունը միանգամայն այլ կերպ կընթանար, յեթե կլեոպատրայի քիթը մի քէչ ավելի կարծ լիներ, և յեղրափակման մեջ, ընդունելով, վոր Մինյեյի հայացքի պաշտպանության համար շատ բան կարելի յե ասել, նա մի անգամ ևս մատնանշում ե, թե ինչում և այդ հեղինակի սիւլը: Մինյեն սոսկ միայն ընդհանուր պատճառների ներգործությանն և վերագրում այն հետեւնքները, վորոնց առաջացմանը նպաստել են նույնպես բաղմաթիվ ուրիշ մանր, մութ ու աննկատելի պատճառներ. նրա կարուկ միտքն ասես չի ուղղում ընդհանուր այն բանի գոյությունը, ինչի մեջ նա չի տեսնում կարգ ու որինահամակերպություն:

## VI

Հիմնավար են արդյոք Սենտ-Բենի առարկությունները: Թվում ե, թե նրանցում ճշմարտության վորոշ մասնիկ կա: Սակայն Բնչակիտ... Այդ մասնիկը վորոշելու համար ամենից առաջ քննենք այն միտքը, թե մարդը կարող և «իր կամքի հանկարծական»

վճիռներով» գեղաքերի ընթացքի մեջ մտցնել մի նոր ուժ, վորն ընդունակ լինի նշանակելի բորբեն փոխելու այդ ընթացքը: Մենք միքանի որինակ բերինք, վորոնք, ինչպես մեզ թվում ե, լավ են պարզաբանում այդ միտքը: Խորանանք այդ որինակների մեջ:

Ամենքին հայտնի յե, վոր Լյուդովիկ ԽV-ի թագավորության որով ուղմական գործը Ֆրանսիայում ավելի ու ավելի ընկնաւմ եր: Ինչպես Անրի Մարտենն և նկատում, յոթնամյապատերազմի ժամանակ ֆրանսական գորքերը, վորոնց հետեւց մշտապես թրև եյին գալիս բազմաթիվ հասարակաց կանայք, առևտրականներ ու ծառաներ, և վորոնց մեջ յերեք անգամ ավելի սայլածիեր կային, քան հեծյալներ, ավելի շուրջ հիշեցնում եյին Դարեհի ու Քոերքսոսի հորդաները, քան Թյուրեննի ու Գուստավ Ազոլիի բանակները \*): Արբենուլցն ասում և այդ պատերազմի իր գրած պատճության մեջ, թե պահակ նշանակված ֆրանսական սպաններն իրենց հանձնված պատերը հաճախ լքում եյին պարելու գնալով մերձակա վայրերից մեկում, և պետքի հրամանները կատարում եյին միայն այն ժամանակ, յերբ այդ հարկավոր ու հարմար եյին համարում: Անգամական գործի այսորինակ խղճալի գրությունը պայմանավորված եր աղնվականության անկումով, — վորը, սակայն, շարունակում եր բանակի բոլով բարձր պաշտոնները գրավել, — և արագորեն իր քայլքայմանը մոտեցող «հին կարգի» ընդհանուր կազմալուծումով: Միայն այս ընդհանուր պատճառները լիովին բավական եյին յոթնամյա պատերազմին Ֆրանսիայի համար անշահավետ ընթացք տալու համար: Բայց կասկածից վեր և, վոր Սուլբրի նման գններանների անընդունակությունը ֆրանսական բանակի համար ել ավելի բազմապատճեց անհաջողության շահութը, վորոնք ընդհանուր պատճառներով եյին պայմանավորված: Իսկ վորովհետև Սուլբրի կանգան եր մնում շնորհիվ տիկի. Պոմպագուրի, ուստի անհրաժեշտ և ընդունել վոր սնավառ մարկիզունին մեկն եր այն «գործոններից», վորոնք յոթնամյա պատերազմի ժամանակ նկատելի չափով ուժեղացրել եյին ընդհանուր պատճառների՝ Ֆրանսիայի համար անբարենպաստ աղբեցությունը իրերի գրության վրա:

\*) «Histoire de France», 4-ème édition, t. XV, p. 520—521.

Մարկիզուհի դը Պոմպադուրն ուժեղ եր վոչ թե իր սեփական ուժով, այլ նրա կամքին յենթարկված արքայի իշխանությամբ։ Կարելի՞ յե արդյոք ասեմ թե Լյուդովիկ ԽV-ի ընտուրությունը ճիշտ այնպիսին եր, ինչպիսին նա անպայմանորեն պետք ե լիներ ըստ Ֆրանսիայի հասարակական հարաբերությունների զարգացման ընդհանուր ընթացքի։ Վոչ, այդ զարգացման միևնույն ընթացքով հանդերձ նրա տեղ կարող եր գտնվել մի ուրիշ արքա, վորն այլ կերպ վերաբերվեր կանանց։ Սենտ-Ենիվը կասեր, վոր դրա համար բավական կլիներ մութ ու աննկատելի ֆիզիոգիական պատճառների ներգործությունը։ Յեվ նա իրավացի կլիներ։ Բայց յեթե այդպիս ե, ուրեմն դուրս ե գալիս, վոր այդ մութ ֆինիտուովիական պատճառները, յոթնամյա պատերազմի ընթացքին ու վախճանին ազդելով, դրանով ել ազդեցին Ֆրանսիայի նաև հետագա զարգացմանը, վորն ուրիշ կերպ կլինթանար, յեթե յոթնամյա պատերազմը չզրկեր Ֆրանսիային նրա գաղություների մեծ մասից։ Հարց ե ծագում, արդյոք այս յեզրակացությունը չի հակասում հասարակական զարգացման որինահամակերպության հատկացողությանը։

Վոչ, ամենեին։ Մատնանշված գեղքերում վորքան ել անկաած և անճնական առանձնահատկությունների ազդեցությունը, վոչ նվազ անկասկած և նաև այն, վոր նա կարող եր տեղի ունենալ միայն ավալ հասարակական պայմանների ժամանակակից մասին։ Առաջարկի հակատամարտից հետո Փրանսացիները սոսկալի զայրացել եյին Սուրբիկի հովանավորուհու գեմ։ Վերջինս ամեն որ բազմաթիվ անանուն նամակներ եր ստանում սպառնալիքներով ու վիրավորանքներով լի։ Այդ խիստ հուզում եր տիկ։ Պոմպադուրին։ Նա սկսեց անքնությունից տանջլիկլ\*։) Բայց այսուամենայնիվ նա շարունակում եր ոժանդակել Սուրբիկին։ 1762 թ. նա իր նամակներից մեկում նշելով Սուրբիկին, վոր վերջինս շարդարացրեց իր վրա զրված հույսերը, ավելացնում եր։ «Սակայն մի վախեցեք վոչնչից, յես կհոգամ ձեր շահերը և կաշխատեմ հաշտեցնել ձեզ արքայի հետ» \*\*։) Ինչպես տեսնում եք, նա չփիշեց հասարակական կարծիքին։ Իսկ ինչու չզիշեց։ Հավանութեն նրա համար, վոր այն ժամանակվա Փրանսական հասարա-

\*) Տե՛ս «Mémoires de madame du Haliffet», Paris 1824, № 181.

\*\*) Տե՛ս «Lettres de la marquise de Pompadour», Londres 1772, t. I.

կությունը հնարավորություն չունեց երան զիջումների հարկադրելու։ Իսկ ինչու այն ժամանակվա Փրանսական հասարակությունն այդ անել չեր կարող Դրանում նրան արգելք եր վնասմ իր կազմակերպությունը, վորն, իր հերթին, կախված եր Ֆրանսիայի այն ժամանակվա հասարակական ուժերի հարաբերակցությունից։ Հետևապես, վերջին հաշվով, այդ ուժերի հարաբերակցությամբ ե, վոր բացատրվում ե այն հանգամանքը, վոր Լյուդովիկ ԽV-ի բնավորությունն ու նրա սիրութիների քմահաճույքները կարողանում եյին Ֆրանսիայի ճակատագրի վրա այդորինակ ցավալի ազդեցություն ունենալը։ Չե վոր յեթե կանացի սեսի նկատմամբ թուլությամբ հատկանշվեր վոչ թե արքան, այլ արքայական մի վորեւ խոհարար կամ ձիապան, ապա այդ վոչ մի պատմական նշանակություն չեր ունենա։ Պարզ ե, վոր բանն այստեղ վոչ թե թուլության մեջ ե, այլ այն մարդու հասարակական զիքքի մեջ, վոր այդ թուլությամբ տառապում ե։ Ընթերցողը հասկանում ե, վոր այս գատողաւթյունները կարող են կիրապել նաև վերը բերված բոլոր որինակների նկատմամբ։ Այս գատողությունների մեջ հարկավոր ե փոխել միայն այն, ինչ յենթակա յե փոփոխման, որինակ՝ Ֆրանսիայի տեղ գնել Ռուսաստանը, Սուրբիկի փոխարեն՝ Բուլուրլինին և այլն։ Ուստի մենք չենք կրկնի այդ գատողությունները։

Դուրս ե գալիս, վոր անհատները, շնորհիկ իբենց բնավորության տվյալ առանձնահատկությունների, կարող են հասարակության ճակատագրի վրա ազդել։ Յերբեմ ազդեցությունը նույնիսկ խիստ նշանակելի յե վնասմ, բայց ինչպես նման ազդեցության հնարավորությունը, նույնպես և նրա սահմանները, վորոշվում են հասարակության կազմակերպությամբ։ Անհատի բնավորությունը հասարակական զարգացման «գործն» ե հանդիսանում միայն այստեղ, միայն այն ժամանակ և միայն այն չափով, վորտեղ, յերբ և վորչափով նրան այդ թույլ են տալիս հասարակական հարաբերությունները։

Մեղ կարող են նշել, վոր անձնական ազդեցության չափերը կախված են նաև անհատի ձիքքերից։ Մենք զրան կհամաձայնենք։ Սակայն անհատն իր ձիքքերը կարող ե յերեան բերել այն ժամանակ միայն, յերբ հասարակության մեջ դրա համար

անհրաժեշտ գիրք գրավի: Խոչու Ֆրանսիայի ճակատագիրը կարող եր գոտինիլ մի մարդու ձեռքում, վոր զուրկ եր հասարակությանն սպասավորելու վորևէ ընդունակությունից ու ցանկությունից: Վորովինետ զա յեր նրա հասարակական կազմակերպությունը: Այդ կազմակերպությամբ ել յուրաքանչյուր տվյալ ժամանակ վարովում են այն գերերը, հետեապես, նաև այն հասարակական նշանակությունը, վորոնք կարող են վիճակվել շնորհալի կամ ապաշնորհ անհատների:

Բայց յեթե անհատների գերերը վորոշվում են հասարակության կազմակերպությամբ, ապա այդ գերերով պայմանավորված նրանց հասարակական ազգեցությունն ինչ ձևով կարող ե հակառակ հասարակական զարգացման որինահամակերպության հասկացողությանը: Նա վոչ միայն չի հակառամ գրան, այլ և նրա ամենատափառ պատկերավորումներից մեկն և հանդիսանում:

Բայց այսուղ ահա թե ինչ պետք ե նկատել: Անհատների հասարակական ազգեցության՝ հասարակական կազմակերպությամբ պայմանավորված հնարավորությունը այսպես կոչված պատահական ճակատագրի վրա: Լյուդովիկ X V -ի հետասիրությունը նրա որդանիզմի վիճակի անհրաժեշտ հետևանքն եր: Բայց Ֆրանսիայի զարգացման ընդհանուր ընթացքի առնչությամբ այդ վիճակը պատահական եր: Մինչդեռ նա, ինչպես մենք արգեն ասացինք, առանց Ֆրանսիայի հետագա ճակատագրի վրա տղեկու չնաց և ինքն ել մտավ այն պատճառների շարքը, վորոնք իրենցով պայմանավորեցին այդ ճակատագիրը: Միրաբոյին մահ պատճառեցին, ինարկե, լիովին որինահամակերպ պատողիրական պրոցեսները: Բայց այդ պրոցեսների անհրաժեշտությունը բարձր վոչ թե Ֆրանսիայի զարգացման ընդհանուր ընթացքից, այլ հոչակավոր հոետորի որդանիզմի վորոշ մասնավոր առանձնահատկություններից և այն Փիզիկական պայմաններից, վորոնց որով նա վարակվեց: Ֆրանսիայի զարգացման ընդհանուր ընթացքի առնչությամբ այդ առանձնահատ կություններն ու այդ պայմանները պատահական են հանդիսանում: Այնինչ Միրաբոյի մահն ազգեց հեղափոխության հետագա ընթացքի վրա և մտավ այն պատճառների շարքը, վոր իրենցով պայմանավորեցին այդ ընթացքը:

Ել ավելի ապշեցուցիչ ե պատահական պատճառների ներառյածությունը Ֆրիդրիխ II-ի վերը բերված որինակում, վորը ծայրահեղ գժվարին գրությունից գուրս յեկալ միայն Բուառությունի անվճառականության շնորհիվ: Բուառությունի նշանակումը նույնիսկ Խուսաստանի զարգացման ընդհանուր ընթացքի առընչությամբ կարող եր պատահական լինել այս բառի մեր վորոշած իմաստով, իսկ Պրուսիայի զարգացման ընդհանուր ընթացքի հետ նա, ինարկե, վոչ մի առնչություն չուներ: Այնինչ հավանականությունից զուրկ չե այն յենթագրությունը, թե Բուառությունի անվճառականությունը հուսահատական գրությունից փրկեց Ֆրիդրիխին: Յեթե Բուառությունի տեղը Սուվորովը լիներ, այն ժամանակ Պրուսիայի պատմությունը գուցե այլ կերպ ընթանար: Բանից գուրս ե գալիս, վոր պետությունների ճակատագիրը յերբեմն կախված ե լինում պատահականություններից, վորոնք կարելի յե անվանել յերկրորդ ասինանք պատահականություններ: «In allem Endlichen ist ein Element des Zufälligen», — առում եր Հեղելը (ամեն վախճանականի մեջ պատահականի տարր կա): Դիտության մեջ մենք գործ ունենք միմիայն «վախճանականի» հետ, ուստի կարելի յե ասել վոր նրա կողմից ուսումնառիրվող բոլոր պրոցեսներում պատահականության տարր կա: Արդյոք սա չի բացառում յերեւոյթների գիտական իմացության հնարավորությունը: Վոչ: Պատահականությունը հատարեկան մի բան ե: Նա յերեան և գալիս անհետես պրոցեսների հատման կետում միայն: Յեվրոպացիների յերեան գալը Ամերիկայում Մեքսիկայի ու Պերուի ընակիչների համար պատահական նօրյան եր այն իմաստով, վոր այդ յերկրների հասարակական զարգացումից չեր բղխում: Իսկ միշտն գարերի վերջում արևմբոյան յեվրոպացիներին տիրած ծովագնացության մոլությունը պատահականություն չեր: պատահականություն չեր այն հանգամանքը, վոր յեվրոպացիների ուժը հեշտությամբ ընկճեց աեղացիների դիմադրությունը: Նաև պատահական չեյին Մեքսիկայի ու Պերուի յեվրոպացիների կողմից՝ նվաճվելու հետևանքները: այդ հետեանքները վերջիվերջո վորոշվեցին վորպես յերկու ուժերի՝ մեկ կողմից նվաճված յերկրների տնտեսական գրության և մյուս կողմից՝ նվաճողների տնտեսական գրության համապոր: Իսկ այդ ուժերը, ինչպես և նրանց համազորը, միան-

գամայն կարող են իրաւ դիտական հետազոտության առարկա լինել:

Յոթնամյա պատերազմի պատահականությունները մեծ աղքեցություն ունեցան Պրուսիայի հետազա պատմության վրա: Բայց նրանց աղքեցությունը բնավ այդ չեր լինի, յիթե նրանք Պրուսիային զարգացման այլ աստիճանի վրա գտնելին: Պատահականությունների հետևանքներն այստեղ ես վորոշվեցին վորովես յերկու ուժերի՝ մեկ կողմից Պրուսիայի առցիալ-քաղաքական վիճակի և մյուս կողմից նրա վրա ազդող յերգուական պետությունների առցիալ-քաղաքական վիճակի համազոր: Հետևապես, այստեղ ես պատահականությունը մարդաբան չի խանգարում յերկութեաների գիտական ուսումնասիրմանը:

Այժմ մենք գիտենք, վոր անհատները հաճախ մեծ աղքեցություն են ունենում հասարակության ճակատագրի վրա, բայց վոր այդ աղքեցությունը վորոշվում է նրա ներքին կառուցվածքով և նրա վերաբերմունքով դեպի այլ հասարակությունները: Բայց դրանով գեռ սպառված չե պատմության մեջ անհատի ունեցած դերի հարցը: Մենք պետք ե նրան մոտենանք նաև այլ կողմից:

Սենտ-Բենվլ կարծում եր, թե իր նշած տեսակի մանր ու մութ պատճառների բավարար թիվ լինելու դեպքում քրանօտական հեղափոխությունը կկարողանար ունենալ մի վախճան, վոր հակադիր լիներ մեր գիտցած վախճանին: Այդ խոշոր սիալ ե: Ինչպիսի խորամիտ հյուսվածք ել կազմելու լինելին մանր հոգեբանական ու ֆիզիոգիական պատճառները, նրանք վոչ մի դեպքում չելին վերացնի այն խոշոր հասարակական կարիքները, վորոնք առաջցըրին քրանօտական հեղափոխությունը. իսկ քանի այդ կարիքները մնային առանց բավարարելու, մրանսիայում հեղափոխական շարժումը չեր գալարի: Վորպեսզի նրա վախճանը հակադիր լիներ այն վախճանին, վոր տեղի ունեցավ իրականության մեջ, հարկավոր եր այդ կարիքները փոխարինել նրանց հակադիր այլ կարիքներով, իսկ այդ, հառկանալի յե, յերեք ի վիճակի չեր լինի անելու մանր պատճառների և վոչ մի զուգորդություն:

Ֆրանսական հեղափոխության պատճառները գտնվում եյին հասարական հարաբերությունների հատկություններում, իսկ Սենտ-Բենվլի յենթագրած մանր պատճառները կարող եյին բու

վրած լինել առանձին անհատների անհատական առանձնահատկությունների մեջ միայն: Հասարակական հարաբերությունների մեջ չին պատճառը արտադրողական ուժերի վիճակի մեջ ե: Նա առանձին անձնավորությունների անհատական առանձնահատկություններից ե կախված թերևս այլպիսի անձնավորությունների՝ տեխնիկական կատարելազործումների, գյուտերի և հայոնաբերումների ավելի կամ պակաս ընդունակություններ ունենալու իմաստով: Սենտ-Բենվլ այլպիսի առանձնահատկություններ չուներ նկատի: Իոկ ամեն այլ առանձնահատկություններով չի ապահովում առանձին անձնավորությունների անմիջական աղքեցությունը արտադրողական ուժերի վիճակի, հետևապես, նաև այն հասարակական հարաբերությունների վրա, վորոնք այդ աղքեցությունով պայմանավորված են, այսինքն՝ Տեսեսական հարաբերությունների: Տվյալ անհատն ինչպիսի առանձնահատկություններ ել ունենա, չի կարող վերացնել ավյալ անտեսական հարաբերությունները, քանի նրանք համապատասխանում են արտադրողական ուժերի ավյալ վիճակին: Բայց անհատի անհատական առանձնահատկությունները նրան շատ թե քիչ պիտանի յեն գարձնում ավյալ անտեսական հարաբերությունների հիման վրա աճող հասարակական կարիքների բավարարման համար, կամ այլպիսի բավարարմանը հակադիրու համար: XVIII դարավերջի ֆրանսիայի կենսական հասարակական կարիքը հնացած քաղաքական հիմնարկներն ուրիշ, նրա տնտեսական նոր կառուցվածքին համապատասխանող հիմնարկներով փոխարինելն եր: Այն ժամանակվա ամենաականավոր ու ոգտակար հասարակական գործիչները հենց նրանք եյին, ովքեր մյուս բոլորից ավելի ընդունակ եյին նպատելու այդ ամենակենուական կարիքի բավարարմանը: Յենթագրենք, թե Միրաբոն, Ռոբեսպիերն ու Բոնապարտն եյին այդ մարդիկը: Ի՞նչ կլիներ, յեթե վաղաժամ մահը Միրաբոյին չհետացներ քաղաքական բեմից: Մահմանագրական միապետության կուսակցությունն ավելի յերկար ժամանակական հաղանական հաղթանակի առաջնական առներ: Բայց միայն այդ: Վոչ մի Միրաբո այն ժամանակ չեր կարող հանրապետականների հաղթանակի առաջնական առներ: Միրաբոյի ուժն ամրողովին հիմնված եր ժողովրդի համակրանքի ու վրա-

տահության վրա, իսկ ժողովուրդը հանրապետության եր ձգտում, վերսփետև արքունիքը նրան գրգռում եր հին կարգերի իր հաւամառ պաշտպանությամբ։ Յեթե միայն ժողովուրդը համոզվեր, վոր Միքարոն չի համակրում նրա հանրապետական ձգտումներին, նա ինքը կդադարեր Միքարոյին համակրելուց, և այն ժամանակ մեծ հսկաորը կկորցներ գրեթե ամեն մի ազդեցություն, իսկ ապա, հավանորեն, զոհ կզնար այն նույն շարժմանը, վոր նա զուր կաշխատեր կասեցնել։ Մոտավորապես նույնը կարելի յետ ասել նաև Ռոբեռովյերի մասին։ Յենթագրենք, վոր իր կուսակցության մեջ նա միանգամայն անփոխարինելի ուժ եր ներկայացնում։ Բայց նա, համենայն գեպս, այդ կուսակցության միակ ուժը չեր։ Յեթե աղյուսի պատահական հարգածն սպաներ նրան, ասենք, 1793 թ. հունվարին, ապա նրա տեղը կբռներ, ինարկե, մի ուրիշը, և թեկուզ այդ ուրիշն ամեն իմաստով ել նըրանից ավելի ցած լիներ, այնուամենայնիվ . գեպքերը կընթանային այն նույն սովորությամբ, վարով նրանք ընթացան Ռոբեռովյերի որով։ Այսպես, որինակ Ժիրոնդիաները հավանորեն այս զեպքում ևս չեյին խուսափի պարուսությունից, բայց հնարավոր ե, վոր Ռոբեռովյերի կուսակցությունը մի քիչ ավելի շուտ զրկվեր իշխանությունից, այնպես վոր մենք այժմ կիսունյինը վոչ թե տերմիգորի, այլ Գլորիալի, պրերիալի կամ մեսորիգորի ունակցիայի մասին։ Վոմանք, գուցե, առեն, թե Ռոբեռովյերն իր անողոք տեսարիզմով արագացրեց, և վոչ թե գանգաղեցրեց իր կուսակցության անկումը։ Մենք այսեղ չենք քննի այդ յենթադրությունը, այլ կընդունենք, վորպես թե նա կատարելապես հիմնավոր ե։ Այդ զեպքում պետք է յենթագրել, վոր Ռոբեռովյերի կուսակցության անկումը տեղի կունենար, տերմիգորի փոխարեն, ֆրուկտիգորի, կամ վանդեմյերի, կամ ըրյումերի ընթացքում։ Կարծ նա աեղի կունենար, թերեւ, ավելի վաղ իսկ գուցե և ավելի ուշ, բայց, այնուամենայնիվ, անպայման տեղի կունենար, վարովին ժողովրդի այն խավը, վորի վրա հենվում եր այդ կուսակցությունը, բնավ պատրաստ չեր յերկար ժամանակ իշխելու։ Իսկ Ռոբեռովյերի յեռանգուն աջակցությամբ յերեան յեկած հետանքներին «հակագիր» հետևանքների մասին համենայն գեպս խոռք ել չեր կարող լինել։

Նրանք չեյին կարողանա յերեան զալ նաև այն զեպքում,

յեթե զնդակը տապալեր Բոնապարտին, առենք, Արկուլի ճակատամարտում։ Այն, ինչ արեց նա իտալական և այլ արշավանքների ժամանակ, ուրիշ գեներալներ ել կանելին։ Նրանք, հավանութեն, յերեան չեյին բերի այնպիսի ձիրքեր, ինչպես նա, և նման փայլուն հաղթանակներ չեյին տանի։ Բայց Գրանսական հանրապետությունն, այնուամենայնիվ, հաղթանակող դուրս կդարայն ժամանակվա իր պատերազմներից, վորովինետե նրա զինվորներն անհամեմատ ավելի լավ եյին, քան յեվրոպական ըոլորդինվորները։ Ինչ վարաբերում ե բրյումերի 18-ին և նրա ունեցած ազգեցությանը մարանսիրի ներքին կյանքի վրա, ապա այսակ ևս գեպքերի ընդհանուր ընթացքն ու վախճանը, հաշվանորեն, բայ եյուրյան նույնը կլինեյին, ինչ վոր նապոլեոնի որով։ Տերմիգորի իննին մահացու հարվածված հանրապետությունը մեռնում եր զանդաղ մահով։ Դիրեկտորիան չեր կարողանում վերականգնել կարգը, վորին այժմ ամենից ավելի ծարավի յեր բարձր դասերի տիրապետությունից ազատված բուրժուացիան։ Կարզը վերականգնելու համար հարկավոր եր «Պար բուր», ինչպես Սիյեսն եր արտահայտվում։ Սկզբում կարծում եյին, թե բարերար թրի գերը կիսազա զեներալ ժուրդանք, իսկ յերը նա սպանվեց նովի մատ, սկսեցին խոսել Սորոյի, Մակ-դոնալդի, Բենակազուի մասին\*։ Բննապարտի մասին խոսել սկսեցին հետագայում, իսկ յեթե նա սպանված լիներ ժուրդանքի նման, ապա նրա մասին բնալ չեյին ել հիշի և առաջ կըպահեյին մի վորեմ այլ «թուր»։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մի մարդ, վորին զեպքերը բարձրացնում են դիկտատորի կոչման, իր հերթին պետք ե անխունջ առաջ ձգտեր գետի իշխանությունը, յետանգուն կերպով այս ու այն կողմը հրմանելով ու անխուն կոխկրտելով բոլորին, ովքեր իր ճամբան փակում եյին։ Բոնապարտը յերկաթե յեռանգ ուներ, և նա փոչինչ չեր խայլում իր նպատակներին համար։ Բայց բացի նրանից ել այն ժամանակ քիչ չեյին յեռանգուն, տաղանդավոր ու փառակեր յեռամշները։ Այն տեղը, վոր նրան հաջողվեց զրավել հավանութեն, չզրավված չեր մեա։ Յենթագրենք, թե մի այլ զեներար կասներ այդ տեղին, ավելի խաղաղատե լիներ, քան նա-

\*) La vie en France sous le premier Empire par le vicomte de Broc, Paris 1895, p. p. 35—36 և 4եւ.

պուեմը, վոր նա չըմբոստացներ իր դեմ ամբողջ Յեվրոպան, ուստի և մեռներ Թյուելյերիւմ, և վոչ թե սուրբ Հեղինեցի կղզում։ Այն ժամանակ Բուրբոնները Ֆրանսիա բնավ չեցին վերագունա։ Նրանց համար նման հետևանքն, ինարկե, «հակադիր» կլիներ այն հետևանքին, վոր իրոք ստացվեց։ Սակայն իր առնչությամբ գեղի Ֆրանսիայի ամբողջ ներքին կյանքը այդ հետևանքը քիչ բանով կտարբերվեր իրականից։ «Լավ թուրը», կարգը վերականգնելով ու բուրժուազիայի տիրապետությունն ապահովելով, շուտով կձանձրացներ նրան իր զորանոցային ոռոգություններով ու իր բոնակալությամբ։ Կոկովեր ազատամիտ շարժում՝ նման այն շարժման, վոր տեղի ուներ սեստավրացիայի ժամանակ, —պայքարն աստիճանաբար կտաքանար, իսկ վորովինեաւ «Լավ թուրը» զիջողականությամբ չեն աչքի ընկնում, ուստի գուցե առաքինի Լյուի-Ֆիլիպին իր քնքուշ սիրած ազգականների գահին նոտեր վոչ թե 1830, այլ 1820 կամ 1825 թվին։ Դեպքերի ընթացքի բոլոր այսպիսի փոփոխությունները կարողանում ենին մասամբ աղդել Յեվրոպայի հետագա քաղաքական, իսկ սրա միջոցով նաև տնտեսական կյանքի վրա։ Բայց հեղափոխական շարժման վերջնական վախճանն այնուամենայնիվ վոչ մի գեպքում «հակադիր» չեր մինի իսկական վախճանին։ Ազգեցիկ անհատներն իրենց խելքի և բնավորության առանձնահատկությունների շնորհիվ կարող են փոխել դեպքերի անհատական կերպարաններ և նրանց վօրու մասնակոր հետևանքները, բայց չեն կարող փոխել նրանց ընդհանուր սովորությունը, վորն ուժից ուժերով և վորոշվում։

## VII

Բացի այդ, պետք ե նկատել նաև ահա թե ինչ։ Մեծ անհատների՝ պատմության մեջ ունեցած դերի մասին գատելիս մենք գրեթե միշտ զոհ ենք դառնում մի վորոշ ոպտիկական պատրանքի, վորը ընթերցողին մատնանշեն ոգտակար կլինի։

Հաստրակական կարգը փրկող «Լավ թրի» գերում հրապարակ գալով նապուենը գրանով ել այդ գերից հեռացրեց մյուս բոլոր գեներալներին, վորոնցից վոմանք այդ գերը գուցե նույնապես կամ գրեթե նույնպես խաղային, ինչպես և նա։ Քանի վոր յեռանդուն զինվարական կառավարչի հաստրակական կարիքը

բավարարված եր, հասարակական կազմակերպությունը մյուս բոլոր զինվարական աաղանդների առաջ փակից զինվորական կառավարչի աեղը հասցնող ուղին։ Այդ կազմակերպության ուժն աննպատ ուժ գարձավ այդ տեսակի այլ տաղանդների յերեան դալու համար։ Դրա շնորհիվ ել տեղի յի ունենում այն սպահեկական պատրանքը, վորի մասին մենք խոսեցինք։ Նապուենի անձնական ուժը մեզ խիստ չափազանցրած ե յերեում, վորովինեաւ մենք նրա հաշվին ենք վերագրում այն ամբողջ հասարակական ուժը, վոր նրան առաջ քաշեց ու նեցուկ յեղավ։ Նա մի ինչ-վոր միանգամայն բացառիկ բան և թվում, վորովինեաւ նրան նման մյուս ուժերը հնարավորաւրյունից իրականաւրյուն չդարձան։ Յեկ յերը մեզ առում են. Բնչ կլիներ, յեթե նապուենը չկանու, ապա մեր յերևակայությունը խանգարվում ե, և մեզ թվում ե, թե առանց նրան բոլորովին չեր կարողանա տեղի ունենալ այն ամբողջ հասարակական շարժումը, վորի վրա եյն հիմնվում նրա ուժն ու ազգեցցությունը։

Մարդկության մասավոր զարգացման պատմության մեջ մի անհատի հաջողությունը անհամեմատ ավելի հազվադեպ և խանգարում մյուսի հաջողությանը։ Բայց այնուղի ել մենք ազատ չենք մատնանշված ոպտիկական պատրանքից։ Յերը հասարակության ավյալ գրությունը նրա հոգևոր արտահայտիչների առաջ վորոշ խնդիրներ և զնում, զրանք ականավոր զլուխների ուշագրությունը զրագում են մինչև այն ժամանակ, յերը իրենց հաջողություն և լուծել այդ խնդիրները։ Իսկ յերը այդ նրանց հաջողություն և, նրանց ուշագրությունն ուղղվում ե այլ առարկայի վրա։ Տվյալ Ա տաղանդը խնդիրը լուծելով, հենց զրանով ել Յ տաղանդը ուշագրությունն այդ արգեն լուծված խնդրից ուղղում և գեպի այլ խնդիր։ Յեկ յերը ձեզ հարցնում են. Բնչ կլիներ, յեթե Ա-ն մեռներ Յ խնդիրը գեռ չլուծած, մենք յերեաւկայում ենք, թե հաստրակության մասավոր զարգացման թելը կխզվեր։ Մենք մոռանում ենք, վոր Ա-ի մահվան գեպքում խնդիրը լուծելուն կարող եր ձեռք զարնել Յ-ն, կամ Շ-ն, կամ Ը-ն, և վոր այդպիսով մասավոր զարգացման թելն անխզելի կմնար, չնայած Ա-ի վաղաժամ կորատին։

Վորպեսզի վորոշ տեսակի տաղանդի տեր մարգը այդ տաղանդի շնորհիվ գեպքերի ընթացքի վրա մեծ ազգեցցություն

ձեռք բերի, անհրաժեշտ է, վոր յերկու պայման պահպանվի: Առաջին. նրա տաղանդը պետք է նրան մյուսներից ավելի համապատասխանող դարձնի տվյալ դարաշրջանի հասարաւական կարեքներին. յեթե նապոլեոնն իր սազմական հանճարի փոխարեն Բենչովինի յերածշտական շնորհքն ունենար, ապա նա, իհարկե, կայսր չեր դառնա: Յերկրորդ. գոյություն ունեցած հասարակական կարգը չպետք է փակի այն անհատի ուղին, վոր ունի հենց այդ ժամանակի համար անհրաժեշտ ու ոգտակար տվյալ առանձնահատկությունը: Նույն նապոլեոնը կմնաներ վորպես քիչ հայտնի գեներալ կամ վորպես գնդապետ Բոնապարտե, յեթե հին սեժիմը Ֆրանսիայում գոյություն ունենար ելի յոթանառունինգ տարի ևս \*): 1789 թվին Դավուն, Դեպեն, Մարմոնն ու Մակղոնարդը պարզուոչիկներ եյին. Բեռնադոտը՝ սերժան, մայոր, Հոչը, Մարսն, Լեֆեվրը, Պիշեգրյուն, Նեյը, Մասոննը, Մյուրտաք, Սուլտը—յենքապաներ եյին. Ռեերոն՝ սրավարժուրյան ուսուցիչ, Լաննը՝ ներկարար. Հուվիյոն Սեն Սիրը՝ դերասան. Փուրդանը՝ ցրիչ, Բեսոյերը՝ ստիրիչ. Բրյունը՝ գրաքար. Փուրերն ու Փյունոն՝ իրավաբանական ֆուլութենի ուստանողներ. Կլերերը՝ նարարապետ. Մարտյեն մինչև հեղափոխությունը զինվորական ժառայության մեջ չեր \*\*):

Յեթե հին սեժիմը գոյություն ունենար մինչև մեր որերը, ապա այժմ մեղնից վոչ վորի մաքով անդամ չեր անցնի, թե անցյալ դարի վերջին Ֆրանսիայում միքանի գերասաններ, գրաշարներ, սափրիչներ, ներկարարներ, իրավաբաններ, ցրիչներ և որավարժության ուսուցիչներ զինվորական տաղանդներ եյին՝ վորպես հասրավորություններ \*\*\*):

\* ) Հնարավոր է, վոր այն ժամանակ նապոլեոնը գնար Թուռասան, ոք նու ուզամ եր գնալ հեղափոխուրյանից միքանի տարի առաջ: Այսուեղ նու աշքի կընկներ, հավանորեն, տաճիկների կամ կովկասյան թանականների դիմ մզգած ճակատամբարերում, բայց այսուեղ վոչ չեր մտածի, վոր այս իբրդ, բայց ընդունակ սպան բարենպատ պայմաններում կարող եր աշխարհի ուերը դառնա:

\*\*) Տես Histoire de France par V. Duruy, Paris 1893, t. II, pp. 524—25.

\*\*\*) Լյուդովիկ XV-ի որով յերրորդ դասի միայն մի ներկայացուցիչ՝ Շեքեր կարողացավ հասնել գեներալ-լեյտենանախ տատիճանին: Լյուդովիկ XVI-ի որով ավելի ևս զժվարացվել եր այդ դասի մարդկանց զինվորական կարյերն, Տես Rambeaud. Histoire de la civilisation française sixième édition, t. II, p. 226.

Ստենդալը նկատում է, վոր Տիցիանի հետ միաժամանակ, այսինքն՝ 1477 թ. ծնված մարդը կկարողանար քառասուն տարի ապրել Մաֆայելի և Լեոնարդո-Վինչիչի հետ, վորոնցից առաջինը մնան և 1520, իսկ յերկրորդը՝ 1519 թվին, վոր նա յերկար տարիներ կկարողանար անցկացնել Կոռեջոյիցի հետ, վորը մնան և 1534 թվին, և Միքել-Անջելոյի հետ, վորն ապրել է մինչև 1563 թիվը, վոր նա կարող եր յերեսունչորս տարեկանից վոչ ավելի լինել յերբ մնան Զիորջիոնին, վոր նա կարող եր ծանոթ լինել Տինտոռետոյի, Բասսանոյի, Վերոնեզի, Հուլիոս Ռոմանոյի և Անդրեյ դել-Մարտոյի հետ, վոր, մի խոռոչով նա բոլոր խոշոր նկարիչների ժամանակակիցը կլիներ, բացառությամբ նրանց, ովքեր պատկանում են Յոլոնյան դպրոցին, վորը մի ամբողջ դար ուշ յերեսան յեկավ \*): Ճիշտ նույնպես կարելի յետեւ, վոր Վոուերմանի հետ միևնույն տարում ծնված մարդն անձամբ կարող եր ճանաչել Հոլանդիայի գրեթե բոլոր խոշոր նկարիչներին \*\*), իսկ Շեքսպիրի հասակակիցն ապրում եր մի ամբողջ շաբք ականավոր դրամատուրգների հետ միաժամանակ \*\*\*):

Վազուց արդեն նկատված եր, վոր տաղանդներն առաջանում են ամենուրեք և ամեն ժամանակի վորտեղ և յերբ գոյություն ունեն նրանց զարգացման համար բարենպատ հասարակական պայմաններ: Այդ նշանակում է, վոր իրականուրյան մեջ դրսնորված յուրաքանչյուր տաղանդ, այսինքն՝ հաստրական ուժ գարձած ամեն մի տաղանդ, հասարակական հարաբերությունների արգասիք է: Բայց յեթե այդ այդպես է, ապա համանալի

\*) Histoire de la Peinture en Italie, Paris 1899, p.p. 23—25.

\*\*) 1608 թվականին ծնվել են Թիերուրդը, Բոռուերը և Ռեմբրանդը, 1610—ին՝ Ալբրիտն Վան-Օստադեն և Ֆերդինանդ Բոլը, 1615—ին՝ Վան-դեր-Զելտը և Ֆերար-Դոուն, 1620—ին՝ Վոուերմանը, 1621—ին՝ Վերնիքուը, Եվերտինզենը և Պայնակերը, 1624—ին՝ Բերնիմը, 1629—ին՝ Պաուլ Պոուտերը 1626—ին՝ Յան Ստենը, 1630—ին՝ Ռյանսուը և Մետուն, 1637—ին՝ Վան-դեր-Զելտենը, 1638—ին՝ Հոբեման, 1639—ին՝ Ալբրիտն Վան-դեր-Վելեն:

\*\*\*) «Շեքսպիրը, Բյումոնթը, Ֆեթչերը, Ջոնսոնը, Ուելսուերը, Մեսինիչը, Ֆորդը, Միդլբուլը և Հեյվուզը միաժամանակ կամ իրար հետեւ յերեսան գալով, նոր սերունդ են հանգիստանում, վորը չնորմիվ եր բարենպատ գոյության, փարթամորեն ծաղկել և այն հողի վրա, վոր նախակարասառված եր նախորդ սերնդի ճիգերով»: Տես, «Histoire de la littérature anglaise», Paris 1863, t. I, p. 468.

յե, թե ինչու տաղանդավոր մարդիկ, ինչպես մենք առել ենք, կարող են փոխել միայն դեպքերի անհամական կերպարանքը, և վոչ թե ընդհանուր ուղղությունը. Երանի իրենք գոյուքուն ունեն միայն Շնորհիվ այդպիսի ուղղության. յերե այդ ուղղությունը չիներ, երանի յերենք չելիս անցնի այն շեմքը, վոր բաժանում և հնարավորությունը իրականությունից:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր տաղանդը տաղանդից տարրեր և լինում: «Յերբ քաղաքակրթության զարգացման մեջ նոր քայլը կյանքի յե կոչում արվեստի մի նոր սեռ,—արդարացիորեն առում և Տեսնը, —յերևան են զալիս հասարակական միտքը կիսով չափ արտահայտող տառնյակ տաղանդներ, վորոնք բոլորվում են նույն միտքը կատարելությամբ արտահայտող մեկ կամ յերկու հանճարի շուրջը \*): Յեթե իտալիայի սոցիալ-քաղաքան և հոգմոր զարգացման հետ չկապված վորեն մեխանիկական կամ ֆիզիոլոգիական պատճառներ գեռ մանուկ ժամանակ սպանեյին Ռաֆայելին, Միքել-Անջելոյին և Լեոնարդո-Վինչիին, ապա իտալական արվեստը պակաս կատարյալ կլիներ, բայց նրա զարգացման ընթանուր ուղղությունը Վերածնության դարաշրջանում կմնար նույնը: Ռաֆայելը, Լեոնարդո-Վինչին և Միքել-Անջելոյն չեն ստեղծել այդ ուղղությունը. Նրանք հանդիմացել են միայն նրա լավագույն արտահայտիչները: Ճիշտ ե, հանճարեղ մարդու շուրջը սովորաբար ամբողջ վալրոց և ստեղծվում, ըստվորում նրա աշակերտներն աշխատում են յուրացնել նրա ամենամանը ձեւերն անդամ. ուստի և այն բացը, վոր կմնար Վերածնության շրջանի իտալական արվեստի մեջ Ռաֆայելի, Միքել-Անջելոյի և Լեոնարդո-Վինչիի վաղահաս մահվան հետեւանքով, ուժեղ ազդեցություն կունենար նրա հետագա պատմության յերկրորդական շատ առանձնահատկությունների վրա: Բայց այդ պատմությունն ել ըստ եյության չեր փոխվի, յեթե միայն վորեն այլ ընդհանուր պատճառներով վորեն եյական փոփոխություն չառաջանար իտալիայի հոգմոր զարգացման ընդհանուր ընթացքի մեջ:

Հայտնի յե, սակայն, վոր քանակային տարբերությունները վերջիվերջո վորակայինի յեն փոխվում: Այդ ճիշտ և ամենուրեք, հետեւաբար, ճիշտ և նաև պատմության մեջ: Արվեստի

մեջ տվյալ հոսանքը կարող է բոլորովին մնալ առանց քիչ թե շատ նշանավոր արտահայտության, յեթե հանգամանքների անընդունավոր դասավորումն իրար հետեւից կամ միքանի այնպիսի տաղանդավոր մարդիկ, վորոնք կկարողանային նրա արտահայտիչները դառնալ: Բայց այդպիսի մարդկանց վաղաժամ կորուստն այդ հոսանքի արվեստային արտահայտությանը կխանգարի միայն այն գեպքում, յեթե նա բավականաչափ խորը չե՝ նոր տաղանդներ առաջ քաշելու համար: Խոկ վորովհետեւ գրականության և արվեստի մեջ ամեն մի տվյալ ուղղության խորությունը վարչում և նրա նշանակությամբ այն զասակարգի կամ խավի համար, վորի ճաշակներն և նա արտահայտում, և այդ զասակարգի կամ խավի հասարակական գերով, ուստի և այստեղ ամեն ինչ գերջին հաշվով, կախված և հասարակական զարգացման ընթացքից ու հասարակական սւժերի հարաբերակցությունից:

### VIII

Յեվ այսպես՝ զեկավար մարդկանց անձնական առանձնահատկություններն իրենցով վարոշում են պատմական գեպքերի անհատական կերպարանքը, և պատահականության տարրը, մեր մատնանշած իմաստով, միշտ վորոշ գեր և խաղում այդ գեպքերի ընթացքում, վորի ուղղությունը վերջին հաշվով վորոշում և այսպես կոչված ընդհանուր պատճառներով, այսինքն՝ խոկապես արտադրողական ուժերի զարգացմամբ և արտադրության հասարակաւոնտեսական պրոցեսի մեջ մարդկանց ունեցած փոխադարձ հարաբերություններով: Պատահական յերեւյթներն ու նշանավոր մարդկանց անձնական առանձնահատկություններն անհամեմատ ավելի նկատելի յեն, քան խորն ընկած ընդհանուր պատճառները: Տասնութերորդ դարը քիչ և մտահոգվել այս ընդհանուր պատճառները և պատմությունը բացատրել և պատմական գործիչների գիտակցական արարքներով ու «կրթերով»: Այդ գարի փիլիսոփաները պնդում եյին, թե պատմությունը կարող եր կատարելապես այլ ուղիներով ընթանալ ամենաչնչին պատճառների ազդեցությամբ, որինակ՝ շնորհիվ այն հանգամքի, վոր վորեւ կառավարչի գլխում վորեւ «ատում» կարող եր չարություն անել (մի նկատառում, վոր մեկ անգամ չե, վոր արտահայտված և Système de la Nature-ի մեջ):

\*) Տես, «Histoire de la littérature anglaise», Paris 1863, t. I, p. 5.

Պատմական գիտության մեջ նոր ուղղության պաշտպան ներն սկսեցին ապացուցել վոր պատմությունը չեր կարող այդ կերպ ընթանալ, քան իրոք նա ընթացել եւ անկախ վորեկ «ատոմիսերից»: Զգտելով վորքան կարելի յև ավելի լավ ընդունել ընդհանուր պատճառների ներգործությունը, նրանք անուշաղիր եյին թողնում պատմական վործիչների անձնական առանձնահատկությունների նշանակությունը: Բայց նրանք դուրս եր գալիս, վոր պատմական գելքերը մաղաչափ անդամ չեյին փոխվի, յեթե այս կամ այն անձը փոխարինվեյին ուրիշ, ավելի կամ պակաս ընդունակ, անձեռով\*): Բայց քանի մենք թույլ ենք տալիս նման յենթադրություն աներ անհրաժեշտորեն պետք ե խոսովանենք, վոր պատմության մեջ անձնական տարրը բացահայտվելու վոզ մի նշանակություն չունի, և վոր նրանում ամեն ինչ հանդում ե պատմական շարժման ընդհանուր պատճառների, ընդհանուր որենքների ներգործությանը: Այդ այն ծայրահեղությունն եր, վոր ընալ տեղ չեր թողնում ձշմարտության այն մասնիկի համար, վոր գտնվում եր հակադիր հայացքի մեջ: Բայց հենց այդ պատճառով ել հակադիր հայացքը շարունակում եր գոյության վորոշ իրավունք վերապահել իրեն: Այս յերկու հայացքների բաղիսումն ընդունեց անտինոմիայի ձեւ, վորի առաջին անդամն եյին ընդհանուր որենքները, իսկ յերկրորդը՝ անհատների գործունեյությունը: Անտինոմիայի յերկրորդ անդամն տեսակետից պատճությունը հանդիսանում եր պատահականությունների հասարակ մի հյուսվածք, առաջին անդամի տեսակետից թվում եր, թե պատմական գելքերի անհատական գծերն անդամ ընդհանուր պատճառների ներգործությամբ եյին պայմանավորված: Բայց յեթե գելքերի անհատական գծերը պայմանավորվում են ընդհանուր պատճառների ազգեցությամբ և կախված չեն պատմական վործիչների անձնական հատկություններից, առաջ դուրս ե գալիս, վոր այդ գծերը վորագվամ են ընդիտելու պատճառներով և չեն կարող փոխվել ինչպես ել փոխվելու

\*) Այսինքն՝ զուրս եր գալիս, վոր յերբ նրանք սկսում եյին դատել պատմական գելքերի որինահամակերպության մասին: Իսկ յերբ նրանցից վորմանք պարզապես նկարագրում եյին այդ յերկութիւնները, ապա նրանք համախ անձնական առարկին նույնիսկ չափազանցրած նշանակություն եյին տալիս: Բայց այժմ մեզ նրանց պատմվածքները չեն հետաքրքրում, այլ դատությանները:

վինեն այդ գործիչները: Այսպիսով թեորիան ստանում է ֆատավուսական բնույթի:

Այդ հանգամանքը չեր վրիպել նրա հակառակորդների ու շագրությունից: Սենտ-Բենվը Մինյեյի պատմական հայացքները համեմատում եր Բոսոյուեյի պատմական հայացքների հետ: Բոսոյուեն կարծում եր, թե այն ուժը, վորի ներգործությամբ տեղի յեն ունենում պատմական գելքերը, վերից և գալիս, թե գելքերն աստվածային կամքի արտահայտությունն են հանդիպանում: Մինյեն այդ ուժը փնտում եր մարդկային կը քերի մեջ, վորոնք պատմական գելքերում դրսորվում են բնույթյան ուժերի անողոքությամբ: Բայց նրանք յերկումն ել պատմությանը նայում եյին՝ վորպես այնպիսի յերկույթների շղթայի վրա, վորոնք վոչ մի գելքում այլ լինել չեյին կարող: Նրանք յերկումն ել ֆատալիստներ են. այս կողմից փիլիսոփան մոտիկ եր քահանային (le philosophe se rapproche du prêtre):

Այդորինակ կշտամբանքը հիմնավոր եր մնում մինչև այն ժամանակ, քանի հասարակական յերկույթների որինահամակերպության ուսմունքը գելքերի վրա պատմական ականավոր գործիչների ունեցած անհատական առանձնահատկությունների ազգեցությունը հավասարեցնում եր գերոյի: Յեկայդ կշտամբանքը պետք և ել ավելի ուժեղ տպագործություն գործեր, քանի վորոնք պարոցի պատմագիրները, տասնութերորդ գարի պատմագիրների ու փիլիսոփաների նման, մարդկային բնուրյան համարում եյին գերագույն ինստանցիան, վորից ըղխում և վորին յենթարկվում եյին պատմական շարժման բոլոր բնդիմանուր պատճառները: Վորովհետև քրանսական հեղափոխությունը ցույց տվեց, վոր պատմական գելքերը մարդկանց միայն գիտակցության արարքներով չե վոր պայմանավորվում են, ուստի Մինյեն, Դիզոն և նույն ուղղության այլ գիտնականներ առաջին կարգն եյին քաշում կրեցրի ազգեցությունը, վորոնք հաճախ իրենցից գեն են ցցում գիտակցության ամեն մի վերահսկողություն: Բայց յեթե կրքերը հանդիսանում են պատմական գելքերի վերջին ու տմենաընդհանուր պատճառը, ինչու ուրեմն իրավացի չե Սենտ-Բենվը, վորը պնդում ե, թե քրանսական հեղափոխությունը կարող եր ունենալ այնպիսի մի վախճան, վոր հակադիր լիներ

այն վախճանին, վորի մասին մենք գիտենք, յեթե գտնվեցին գործիչներ, վորոնք ընդունակ լինելին ֆրանսական ժողովրդին ներշնչելու այնպիսի կրքեր, վոր հակադիր լինելին այն կրքերն, վորոնք նրան հուզում ելին: Մինյին կասեր. վորովհեաւ այլ կրքեր այն ժամանակ չելին կարող հուզել ֆրանսացիներին ըստ մարդկային բնության իսկ հատկությունների: Վորոշիմաստով այդ ճիշտ կլիներ: Սակայն այդ ճշմարտությունը կունենար ֆատալիստական ուժեղ յերանգ, վորովհեաւ նա հավասարացոր կլիներ այն դրույթին, թե մարդկության պատմությունները ըոլոր մանրամասնություններով նախորոշված ե մարդկային բնության բնինանուր հատկություններով: Ֆատալիզմն այսուղ հանդես կգար՝ վորպիս հետեանք անհատականի չքացման՝ բնինանուրի մեջ: Ասենք, նա հենց միշտ ել նման չքացման հետևանք ե հանդիսանում: Ասում են. «յեթե ըոլոր հասարակական յերևույթներն անհամեշտ են, ապա մեր գործունեյությունը վոչ մի նշանակություն չի կարող ունենալ»: Այդ ճիշտ մտքի սիալ ձևակերպումն ե: Գետք ե ասել. յեթե ամեն ինչ արվում ե բնինանուրի միջոցով, ապա յեզրիին, իսկ այդ թվում նաև իմ ջանքերը, վոչ մի նշանակություն չունեն: Այդպիսի յեղակացությունը ճիշտ ե, միայն թե նրանից սխալ են ոգտվում: Նա վոչ մի իմաստ չունի պատմության նկատմամբ յեղած արդի մատերիալիստական հայացքի վերաբերմաք, վորի մեջ տեղ կա նաև յեզրիի համար: Բայց նա հիմնավոր եր սեստավրացիայի ժամանակների ֆրանսական պատմագիրների հայացքների նկատմամբ:

Ներկայումս մարդկային բնությունը չի կարելի արդեն համարել պատմական շարժման վերջին և ամենաընդհանուր պատմաը. յեթե մարդկային բնությունը մշտական ե, ապա նա չի կարող բացատրել պատմության չափազանց փոփոխական ընթացքը, իսկ յեթե նա փոխվում ե, ապա ակներել ե, վոր նրա փոփոխություններն իրենք պայմանավորված են պատմական շարժումով: Ներկայումս մարդկության պատմական շարժման վերջին ու ամենաընդհանուր պատմառ պետք ե ճանաչել արտադրողական ուժերի գարգացումը, վորոնցով պայմանավորվում են հետևողական փոփոխությունները մարդկանց հասարակական հարաբերությունների մեջ: Այս բնինանուր պատմառի կողքին գոր

ծում են նաև պատմառները, այսինքն՝ պատմական միջավայրը, վորի մեջ տեղի յեւ ունենում տվյալ ժողովրդի արտադրողական ուժերի գարգացումը, և վորն ինքը վերջին ինստանցիայում ստեղծվել ե ուրիշ ժողովուրդների նույն ուժերի դարդացմամբ, այսինքն՝ միենանուր ընդհանուր պատմառով:

Վերջապես, նաև պատմառների ազգեցությունը լրացվում է յեզակի պատմառների ազգեցությամբ, այսինքն՝ հասարակական գործիչների անհատական առանձնահատկությունների և ուրիշ «պատմահականությունների» ազգեցությամբ, վորոնց շնորհիվ գեղաքերը, վերջապես, ուստի ու են իրենց անհատական կերպաները: Յեզակի պատմառները չեն կարող արմատական փոփոխություններ առաջացնել այն բնինանուր ու նաև պատմառների ազգեցության մեջ, վորոնցով բացի այդ պայմանավորվում են յեզակի պատմառների ազգեցության ուղղությունն ու սահմանները: Բայց, այնուամենայնիվ, անկառակած ե, վորպատմությունը կունենար այլ կերպարանք, յեթե նրա վրա ազգած յեզակի պատմառները փոխարինված լինելին նույն կարգի ուրիշ պատմառներով:

Մոնու ու կամպը կառը մինչև այժմ ել կանգնած են մարդկային բնության տեսակետի վրա: Կամպը կառը կարականորեն և շատ անգամ հայտարարել ե, վոր, իր կարծիքով, պատմական յերևույթների հիմնական պատմառը սոցիալական պսիխիկան և հանդիսանում: Այդ մեծ սխալ ե, և այդպիսի սխալի շնորհիվ հասարակական կյանքի վող գումարը նկատի առնելու ինքնըստինքյան շատ գովելի ցանկությունը կարող ե հասցնել լոկանքովանդակ, թեպետ և փափլիկ եկեղեկարգմի կամ—ավելի հետևողականներին—մտքի ու զգացմունքի համեմատական նշանակության մասին կարլիցի արած զատողություններին:

Բայց դառնանք մեր նյութին: Մեծ մարդը մեծ և վոչ թե նրանով, վոր նրա անհատական առանձնահատկությունները խոշոր պատմական գեղաքերին անհատական կերպարանք են հաղորդում, այլ նրանով, վոր նա ունի այնպիսի առանձնահատկություններ, վորոնք նրան առավել ընդունակ են դարձնում ծառայելու իր ժամանակի հասարակական այն մեծ պահանջներին, վորոնք առաջացել են ընդհանուր ու հատուկ պատմառների ազգեցության տակ: Կարլեյլը հերսոնների մասին իր գրած հայտնի

աշխատության մեջ մեծ մարդկանց սկսողներ (Beginners) ե անվանում: Այդ շատ հաջող կոչում ե: Մեծ մարդն հենց սկսող ե հանդիսանում, վորովհետև մյուսներից ավելի հեռուն ե տեսնում և ուրիշներից տվիլի ուժեղ ե կամենում: Նա լուծում ե հասարակության մտավոր զարգացման նախորդ ընթացքի կողմից հերթի գրված գիտական խնդիրները, նա մատնանշում ե հասարակական հարաբերությունների նախորդ ընթացքով ստեղծված նոր հասարակական կարիքները, նա իր վրա յե վերցնում այդ կարիքների բավարարման նախաձեռնությունը: Նա հերոս ե: Հերօս՝ վոչ այն իմաստով, վոր իրը թե կարող ե կանգնեցնել կամ փոխել իրերի բնական ընթացքը, այլ այն իմաստով, վոր նրա գործունեյությունը, այդ անհրաժեշտ ու անգիտակցական ընթացքի գիտակցական ու աղատ արտահայտությունն ե հանդիսանում: Դրա մեջ ե նրա ամբողջ նշանակությունը, գրանունն ե նրա ամբողջ ուժը: Բայց դա վիթխարի նշանակություն ե, սոսկալի ուժ:

Բիոմարկն ասում էր, թե մենք չենք կարող պատմություն կերտել, այլ պետք ե սպասենք, մինչև վոր նա կատարի: Ստակայն մի ե պատմություն կերտողը: Նրա կերտողը հասարակական մարդի ե, վորը նրա յեզակի «գործնեն» ե: Հասարակական մարդն ինքն ե ստեղծում իր, այսինքն՝ հասարակական հարաբերությունները: Բայց յեթե նա այլի ժամանակակից ժամանակ ստեղծում ե հենց այսպիսի և վոչ ուրիշ հարաբերություններ, ապա, հասկանալի յե, այդ տեղի յե ունենում վոչ առանց պատճառի: այդ պայմանավորվում ե նրա արտադրողական ուժերի վիճակով: Վոչ մի մեծ մարդ չի կարող հասարակության վկին փաթաթել այնպիսի հարաբերություններ, վորոնք արդեն չեն համապատասխանում կամ դեւիս չեն համապատասխանում այդ ուժերի վիճակին: Այս իմաստով նա, իրոք, չի կարող պատմություն կերտել և այս գեղքում նա իզուր առաջ կցցեր իր ժամացույցը, նա չեր արագացնի ժամանակի ընթացքը և հետ չեր շրջի այն: Այսուղեղ կամպրեխաը կատարելապես իրավացի յե, նույնիսկ իր հզորության գագաթնակետին գտնվելով հանգերձ, Բիոմարկը չեր կարող Գերմանիան հետ դարձնել գեղի բնական տնտեսությունը:

Հասարակական հարաբերություններն ունեն իրենց արա-


մարանությունը, քանի մարդիկ գործում են տվյալ փոխադարձ հարաբերությունների մեջ, նրանք անպայմանորեն զգալու յեն, մտածելու ու վարկելու հենց այս կերպ, և վոչ այլ կերպ: Այս տրամաբանության դեմ ևս զուր պետք ե պայքարեր հասարակական գործիչը, իրերի բնական ընթացքը (այսինքն՝ հասարակական հարաբերությունների նույն այդ տրամաբանությունը) նրա բոլոր ջանքերն ի չիք կդարձներ: Բայց յեթե յես գիտեմ, թե վոր ուղղությամբ են փոխվում հասարակական հարաբերությունները ջնորհիվ այն տվյալ փոփոխությունների, վոր կատարվում են արտադրության հասարակական տնտեսական պրոցեսի մեջ, ապա յես գիտեմ նույնպես, թե վոր ուղղությամբ կփոխվի նաև սոցիալական պահիկական, հետևաբար, յես հնարավորություն ունեմ նրա վրա աղդելու: Աղդել սոցիալական պահիկայի վրա, նշանակում ե աղդել պատմական զեաքերի վրա: Հետևաբար, վորոշ իմաստով յես, այնուամենայնիվ, կարող եմ պատմություն կերտել և կարիք չունեմ սպասելու, մինչեւ նա «կերտվի»:

Մոնոն յենթագրում ե, թե պատմության մեջ իրոք կարեոր գեպքերն ու անհատները կարևոր են սոսկ վորպես հիմնարկների ու անտեսական պայմանների զարգացման նշաններ ու սիմբոլներ: Սա արգարացի, թեպետ և շատ անձգրիտ արտահայտված միտք ե, բայց հենց վարովիներ այլ միտքն արդարացի յե, ուստի անհիմն բան ե մեծ մարդկանց գործունեյությունը հակադրել հիշյալ հիմնարկների ու պայմանների «գանդաղ շարժմանը»: «Ճնտեսական պայմանների» ավելի կամ պակաս դանդաղ փոփոխությունը հասարակությանը պարբերաբար գնում ե իր հիմնարկներն ավելի կամ պակաս արագությամբ վերափոխելու անհրաժեշտության մեջ: Այսպիսի վերափոխությունը յերբեք «ինքնիրեն» չի կատարվում. նա միշտ պահանջում է մարդկանց միջամտությունը, վորոնց առաջ, այսպիսով, հասարակական մեծ խնդիրներ են ծառանում: Մեծ գործիչներ ել հենց նրանք են կոչվում, ովքեր մյուսներից ավելի յեն աշակցում գրանց լուծմանը: Իսկ խնդիր լուծել չի նշանակում սոսկ «սիմբոլ կամ «նշան» լինել այն բանի, թե խնդիրը լուծված ե:

Մեզ թվում ե, թե Մոնոն իր հակադրումն արել ե գլխավորապես այն պատճառով, վոր հափշտակվել ե «գանդաղ» հանելի բառով: Փամանակակից շատ ելույսցիոնիստներ սիրում են

այդ բառիկը: Հոգեբանութեն հասկանալի յէ նման կրքոտությունը.  
նա անհրաժեշտութեն ծնվում ե չափավորության և ճշտափրության  
բարեմիտ միջավայրում... իսկ տրամբանութեն նա քննադատու-  
թյան չի դիմանում, ինչպես այդ ցույց տվեց Հեղելը:

Յեզ միայն «սկսողների», միայն «մեծ» մարդկանց համար  
չե, վոր բաց ե գործունեյության լայն դաշտը: Նա բաց ե նրանց  
բոլորի համար, ովքեր աչք ունեն տեսնելու, ականջ՝ լսելու և  
սիրո՞ իրենց մերձավորներին սիրելու համար: Մեծ հասկացու-  
դությունը հարաբերական հառկացողություն ե: Բարոյական  
իմաստով մեծ ե ամեն վոք, ով, ավետարանի արտահայտու-  
թյամբ, «զիցե զնոգի յուր վասն բարեկամաց յուրոց»:



Թարգմանիչ Լ. Աբովյան

Խմբագիր Ա. Հարենց

Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան

Սըբագրիչ Վ. Զիգեզյան

Կոնսուլ սըբագրիչ Լ. Աբովյան

Դրավիտի լիազոր № Կ—2482, հըատ. № 642,

Պատվեր № 11, սիրու 10.000

Թղթի չափար 62×94  $\frac{1}{16}$  (38.480 տպ. սիլ 1 տպ. մամուլում)

$\frac{3}{2}$  տպ. մամուլ,  $\frac{1}{4}$  թերթ թուղթ,

Հանձնվել ե արտադրության 20/1 1939 թ.

Սառագրվել ե ապագրելու 3/III 1939 թ.

Տինը 75 կ.

Գետիքատ—Թաղաքական գրականության հրատարակչության  
ապարան, Յերևան, Ալահերդյան № 65

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0928146

19 MAR 1939

134

ԳԻՒԾ 75 Կ.

"

28628

Г. В. ПЛЕХАНОВ  
К ВОПРОСУ О РОЛИ  
ЛИЧНОСТИ В ИСТОРИИ

Аригна—Издательство полит. литературы.  
Ереван, 1939